Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
Z-76

335

Ս. ՆԵԿՐԱՍՈՎ

ԻՆՉՊԻՍԻ ԿԱՐԳԵՐ ԵՆ ՀԱՐԿԱՒՈՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Ռուսերէն թարգմ. ԳԱՌ. ՊԱՊՈՎԵԱՆ։

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ»
1907

8040-56

„Пушкинская Скоропечатня“. С.-Петербургъ, Лештуковъ пер. 4.

ՑԱՌԱՋԱԲԱՆ

Պետական և հասարակական գործը—դա մեր սեփական գործն է։ Ամեն մէկ մարդ պէտք է պարզ և որոշակի կերպով գիտենայ և հասկանայ թէ ի՞նչ է կատարւում իր շուրջը, իր հայրենի պետութեան մէջ։ Ամեն մէկ մարդ, լինի նա աղնուական թէ հասարակ, հարուստ թէ աղքատ, կրթուած թէ անկիրթ, այնուամենայնիւ նա իր հայրենիքի քաղաքացին է։ Եւ այն ամենը, ինչ կատարւում է իմ հայրենիքում, այսպէս թէ այնպէս, մեծ կամ փոքր չափով, այսպէս բայց և անպայման ինձ էլ է վերաբերում։ Օրինակ, այլ բան է մի կտոր հաց գտնել աղքատ, խաւար, անօրէն երկրում, և միանգամայն այլ բան է—ապրել և աշխատել հարուստ, լուսաւոր և իրաւական երկրում։ Այլ բան է, երբ մարդ ինքն է իր գործերի տնօրէնը, և միանգամայն այլ բան է, երբ նա ամեն բանում պարտաւոր է միայն հպատակուել ամենազօր իշխանութեան կարգադրութիւններին, որը գործում է այնպիսի օրէնքների հիման վրայ, որոնք սահմանուած են առանց ժողովրդի համաձայնութեան և կամքի։ Այլ բան է—ապրել և սովորել այնպիսի մի երկրում, որտեղ կան հաղարաւոր զանազան լաւ բարեկարգ դպրոցներ, և միանգամայն այլ բան է ապրել մի այնպիսի երկրում, որտեղ դպրոցները շատ քիչ են ու անպէտք, և որտեղ կառավարութիւնը դիտմամբ ժողովրդին

պահում է խաւարի մէջ, խնայում է դպրոցների վրայ փող ծախսել, որովհետև այդ փողերը հարկաւոր են իր սեփական դրպանի համար։ Այլ բան է ապրել մի այնպիսի երկրում, որտեղ հարկերը բիչ են և ապրանքները արժան, որովհետև զանազան հարկերի և մաքսի չեն ենթարկւած, և միանգամայն այլ բան է ապրել մի այնպիսի երկրում, որտեղ հարկերի և տուրքերի ծանրութիւնից ուղղակի շունչ քաշել չի լինում։

Կնշանակէ պետական գործերը — մեր սեփական գործերն են, նրանք բոլորն էլ աւելի քան մեզ են վերաբերում։ Համաժողովրդական անիրաւասութիւնը — դա մեր սեփական անիրաւասութիւնն է։ Համաժողովրդական աղքատութիւնը — դա մեր սեփական աղքատութիւնն է։ Համաժողովրդական տգիտութիւնը — դա մեր սեփական տգիտութիւնն է։ Կնշանակէ, չի կարելի ապրել մի պետութեան մէջ և ասել թէ պետական գործը — դա մեր գործը չէ։ Ընդհակառակը — դրանց մասին հարկաւոր է մտածել և շատ ու շատ մտածել։ Պէտք է հասկանալ թէ նրանց մէջ որն է լաւ, որն է վատ։ Պէտք է միջամտել այդ գործերում։ Հարկաւոր է զանազան միջոցներով ձգտել, որ վատ կարգերը քանի կարելի է շուտով քանդւեն և ոչնչանան, իսկ լաւերը աճեն և բազմանան։ Դրան ձգտելը — ամեն մի քաղաքացու պարտականութիւնն է։

Կնշանակէ Ռուսաստանի ամեն մի քաղաքացին պէտք է պարզ և որոշակի կերպով հասկանայ, նախ և առաջ թէ ինչ կարգեր են տիրում իր հայրենի պետութեան մէջ, լաւ են թէ վատ, և թէ ինչքա՞ն են լաւ կամ վատ։ Իր պետութեան մէջ գոյութիւն ունեցող կարգերը պարտաւոր է հասկանալ ամեն մի քաղաքացի, եթէ ուզում է օգնել իր ժողովրդին և լինել իսկական քաղաքացի։ Բայց դա դեռ բաւական չէ։ Նա պարտաւոր է նոյնպէս պարզել իր համար և

հասկանալ թէ ինչպիսի փոփոխութիւններ պէտք է մտցնել պետական կազմի մէջ, որպէսզի բոլոր մարդիկ, ի հարկէ նախ և առաջ աշխատաւոր մարդիկ, ապրեն լաւ և ապահով, այն աշխատաւոր մարդիկ, որոնք ամեն մի պետութեան հիմքն են կազմում։ Վերջապէս, անհրաժեշտ է իմանալ և հասկանալ, թէ ինչ միջոցներով կարելի է մտցնել այդ փոփոխութիւնները, և ինչպէս վատ, անարդար կարգերը փոխարինել արդարացի կարգերով։

ԳԼՈՒԽ Ա.

ՊԵՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆԵՐԿԱՅ ԱՆԱՐԴԱՐ ԿԱԶՄԸ։

Երկու գլխաւոր հասարակական դասակարգեր։

Ներկայ ռուսական պետութիւնը կազմուած է հեռաւեալ ձեւով՝ նրա հիմքը, որի վրայ կանգնած է ամբողջ պետական շէնքը, կազմում է աշխատաւոր, հասարակ ժողովուրդը— գիւղացիութիւնը ու գործարանական և այլ բանւորութիւնը։ Նրանց աշխատանքով է կերակրւում ամբողջ երկիրը։ Առանց նրանց աշխատանքի չէն կարողանայ ապրել ոչ չինովնիկները, ոչ կալւածատէրերը, ոչ գործարանատէրերը, ոչ բանկիրները, ոչ վաճառականները, ոչ զինւորականները, ոչ քահանաները, ոչ դատաւորները, ոչ ոստիկանները, և առհասարակ այն մարդկանցից և ոչ մէկը, որոնք կառավարում են ժողովրդին, ժողովրդի վզին են նստած և ժողովրդով էլ կերակրւում են։

Կնշանակէ, ռուսական պետութեան մէջ, ինչպէս և ուրիշ տեղերում, մարդիկ լինում են երկու տեսակ՝ նախ և առաջ այն մարդիկ, որոնք ապրում են իրենց սեփական աշխատանքով. ինչ աշխատեցիր՝ նա էլ քոնն է. քանի դեռ աշխատում ես, մի կերպ կուշտ ես։ Այդպիսի մարդիկ կապիտալ չունեն, շահով փող չեն տալի և ոչ էլ հող են տալի կապալով։ Այդ մարդկանց գլխաւոր և հիմնական եկամուտը— նրանց սեփական աշխատանքն է։ Ճիշտ է, նրանք ուրիշի

համար են աշխատում, բայց եթէ կուշտ են միայն շնորհիւ իրենց սեփական և ոչ թէ ուրիշի աշխատանքի։ Այդպիսի մարդիկ կոչւում են աշխատաւոր ժողովուրդ կամ աշխատաւոր դասակարգ։ Ռուսաստանում այդպիսի աշխատաւոր ժողովրդի թիւը հասնում է մինչև հարիւր միլիոնի։

Բայց, աշխատաւոր ժողովրդից դուրս, կան և ուրիշ տեսակի մարդիկ։ Այդ մարդիկ միշտ կուշտ են լինում և իրենց ապրուստի միջոցները ստանում են միանգամայն այլ ճանապարհով։ Նրանք իրենց ապրուստի միջոցները վերցնում են աշխատաւոր ժողովրդից։ Այսպէս օրինակ, կալւածատէրերը կուշտ են նրա համար, որ իրենց հողից եկամուտ են ստանում, իսկ այդ հողը եկամուտ է տալիս միայն նրա համար, որ նրա վրայ աշխատում է գիւղացին կամ իբրև վարձու մշակ կամ իբրև կապալառու։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ վարձու մշակը իր աշխատանքի համար ստանում է միայն իր աշխատավարձը, իսկ դրանից աւելին ստացւածը նա ուղի չուղի պէտք է տայ իր աղային, հողի տիրոջը. բանւորի քրտինքով ջրած և բանւորական աշխատանքով բուսցրած հացը ծախելուց, բանւորը հազիւ հաղ կարողանում է կէս քաղցած ապրել, իսկ դրա փոխարէն կալւածատէրը միանգամայն կուշտ է լինում։ Նոյն բանն է և կապալի հետ։ Կապալով վերցրած հողի վրայ աշխատում է գիւղացին, իսկ կալւածատէրը առանց մատը մատին խրփելու այդ կապալից ստացւած փողերը իր գրպանն է դնում։ Վերջը դուրս է գալի, որ կալւածատէրը աւելի կուշտ է լինում քան գիւղացին։

Կալւածատիրոջ նման, ուրիշի աշխատանքով է ապրում և գործարանատէրը։ Նրա գործարանը, բանւորների աշխատանքի շնորհիւ, ապրանքներ է դուրս բերում։ Այդ ապրանքները, ծախելով փող են դառնում։ Այդ փողերի մի մասը վճարում

են բանւորներին նրանց աշխատանքի համար, մի մասը ծախսում են գործարանի վերաշինութեան, մեքենաների վրայ ծախսած փողերը ծածկելուն, գուցէ և պարտքի տոկոսները վճարելու վրայ, եթէ գործարանատէրը պարտք է առել որևէ հարուստ կապիտալիստից. իսկ մնացած փողերը մանում է գործարանատիրոջ գրպանը։ Դա նրա օգուտն է— նրա եկամուտը։ Ահա դրանով է նա ապրում, դրանով է նա հարստանում, թէև ոչ թէ ինքը, այլ բանւորներն են աշխատել։ Այդպիսով նա բանւորի աշխատանքը իր քսակն է դրնում, խլում բանւորի կոպէկները։ Նա ոչ թէ իր, այլ ուրիշի աշխատանքով է կուշտ, իսկ ինչ վերաբերում է բանւորին, նա ստիպւած է կերակրել թէ իրեն և թէ աղային, այսինքն ուղի-չուղի պէտք է իր արիւն-քրտինքի աշխատանքը երկու կէս անի, մէկը—իրեն, միւսը—աղային, թէև վերջինս բոլորովին չէ աշխատել։

Կնշանակէ, թէ՛ կալւածատէրը, թէ՛ գործարանատէրը ապրում են և կուշտ են լինում միայն գիւղացիների և բանւորների, այսինքն աշխատաւոր ժողովրդի աշխատանքի շնորհիւ։ Նոյնը կարելի է ասել և բանկիր կապիտալիստի մասին, որը ոչինչ չանելով, գիտէ միայն տոկոսները և, ընդհանրապէս, իր կապիտալի եկամուտը ստանալ. վերջ ի վերջոյ այդ տոկոսները, այդ եկամուտը վճարում է նոյն աշխատաւոր ժողովուրդը։

Ուրեմն երկու տեսակ մարդիկ են լինում. առաջին— աշխատաւոր ժողովուրդ և երկրորդ աշխատաւոր ժողովրդի շահագործողները, այսինքն այնպիսի մարդիկ, որոնք ուրիշի աշխատանքով են ապրում։ Այդ մարդկանց անւանում են կապիտալիստներ, բուրժուազիա։ Բոլոր շահագործողները և բուրժուաները իրար նման են նրանով, որ նրանք բոլորն էլ աշխատաւոր ժողովրդի հաշւով են ապրում։ Իսկ աշխա-

տաւոր դասակարգի բոլոր մարդիկ, լինի նա ռանչպար— գիւղացի թէ գործարանական բանւոր, իրար նման են նրանով, որ նրանք չեն կարող ապրել, եթէ ուրիշի համար չաշխատեն։ Դա ոչ թէ միայն Ռուսաստանումն է այդպէս, այլ բոլոր երկրներում, բոլոր պետութիւններում։ Գիւղացու հողը պակաս է և դրա համար էլ նա պէտք է կողմնակի աշխատանք գտնի, այսինքն կամ վարձու բանւոր դառնայ, կամ կապալով վերցնի հարևան կալւածատիրոջ հողը։ Գործարանական բանւորը նոյնպէս վարձու մշակ է։ Այստեղ էլ, այնտեղ էլ աշխատաւոր մարդու՝ թէ՛ գիւղացու և թէ բանւորի բաղդը մէկ է։

Գիւղացիները և բանւորները։

Ի՞նչ տեսակ են լինում աշխատաւոր դասակարգի մարդիկ։ Ռուսաստանում նրանց մեծ մասը գիւղացիներ են։ Նրանց թիւը մինչև 100 միլլիոնի է հասնում։ Նրանց մէջ էլ, ի հարկէ, կան վաշխառուներ, որոնք նոյնպէս աշխատաւոր ժողովրդի հաշւով են ապրում. բայց ամենամեծ մասը ռանչպար գիւղացիք են, այսինքն աշխատաւոր գիւղացիութիւն է։ Վաշխառու գիւղացիները նոյն բուրժուազիան են կամ ժողովրդի շահագործողները։ Դա աշխատաւոր ժողովուրդը չէ։ Իսկ բաշպար-գիւղացիները ապրում են իրենց ձեռքի աշխատանքով, երկրագործութեամբ։ Նրանք ոչ ոքին չեն շահագործում, ոչ ոքի մէջքին չեն հեծնում, ոչ օքի հաշւով չեն ապրում։ Նրանք իրենց ձեռքերով են մշակում հողը։ Բաշպարները հէնց նրանով են տարբերւում կալւածատէրերից և վաշխառուներից, որ իրենք են աշխատում հողի վրայ և ոչ թէ կապալով են տալի ուրիշներին։ Նրանք իրենք են հողի

պակասութեան պատճառով, կապալով վերցնում կալւածատիրոջ հողը։ Ինչքան որ հող կայ ռուսական պետութեան մէջ, ամենն տեղ մշակւում է գիւղացիական ձեռքերով։ Բայց գիւղացիների ունեցած հողը ո՞ւր, կալւածատէրերինը ո՞ւր։ Այսպէս օրինակ, Եւրոպական Ռուսաստանի 49 նահանգներում ամեն մի գիւղացու վրայ ընկնում է կլոր թւով $2^1/_2$ դեսիատին հող (2,6 դես.). իսկ ամեն մի կալւածատիրոջ վրայ, միևնոյն նահանգներում, ընկնում է 195 դեսիատին։ Բոլորին յայտնի է, որ գիւղացիները տանջւում են հողի պակասութիւնից։ Շատ տեղերում ամբողջ տարիներ նրանք սովամահ են լինում, որովհետև հողը քայքայւել ու անբեր է դարձել և լաւ հունձ չի կարողանում տալ։ Ուրեմն դուրս է գալի, որ ռուսական պետութիւնը գիւղացիութեան վրայ է կանգնած, գիւղացիութիւնը հողով է ապրում, իսկ նա տանջւում է հողի պակասութիւնից, որը գտնւում է ծրիակեր-շահագործողների ձեռքում։ Պարզ է, որ դա անարդարութիւն է։

Կնշանակէ, ռուսական պետութիւնը անարդարութեան վրայ է կանգնած։ Պետութեան այդպիսի կազմը ձեռնտու է միայն ժողովրդի շահագործողների համար։ Օրինակ, կալւածատէրերը օգտւելով գիւղացիական հողասակաւութեամբ, բարձրացնում են իրենց կալւածատիրական հողերի կապալադինը։ Գիւղացիութեան աղքատութեան շնորհիւ կալւածատէրերը կարող են արժան գնով բանւորներ վարձել։ Նոյն այդ աղքատութեան շնորհիւ գիւղացիները ուզեն չուզեն պէտք է դուրս գնան իրենց հայրենի գիւղից աշխատանք գտնելու համար, օրինակ գնան քաղաքները, գործարաններում աշխատելու։ Նոյն աղքատութեան շնորհիւ քաղաքներում և գործարաններում գիւղացիները կամայ ակամայ պէտք է վարձւեն արժան գնով, այսինքն պակասեցնեն իրենց

սեփական աշխատանքի գինը միայն թէ սովից չմեռնեն։ Այդ պատճառով, ռուսական գործարանական բանուորների մէջ կան շատ գիւղացիներ, որոնք գիւղում ևս հող ունեն։ Ուրիշ խօսքով ասած, շատ բանուորներ—միևնոյն ռանչպար-գիւղացիներ են, որոնք գնացել են աշխատանքի։ Ռուսական բանուորների մեծ մասը այդպէս է։

Պրոլէտարիատ։

Բայց կան և ուրիշ տեսակներ։ Կան մարդիկ, որոնք աշխատելով գործարաններում կամ դաւօդներում, բոլորովին կորուել են հողից, այլևս ռանչպար-գիւղացիներ չեն, այլ գործարանական բանուորներ, արհեստաւորներ, որոնք իրենց հողը կամ ծախել կամ կապալով են տուել։ Կան այնպիսի գործարանական բանուորներ, որոնք ոչ մի կտոր հող, ոչ մի անշարժ կայք, ոչ մի կապիտալ չունեն։ Նրանց ամբողջ կարողութիւնը—իրենց ձեռքերն ու ոտները, գլուխն ու մէջքն են։ Սովամահ չլինելու համար նրանք ստիպուած են ծախել իրենց աշխատանքը, այսինքն վարձուել մէկի մօտ, դառնալ վարձու աշխատող, իր ռոճիկով, աշխատավարձով ապրել։ Այդպիսի բանուորները կոչւում են պրոլէտարներ, իսկ նրանց ամբողջ դասակարգը (այսինքն բոլորը միասին) կոչւում է պրոլէտարիատ։ Ռուսաստանում այդպիսի, գործարանական, գիւղատնտեսական և այլն բանուորների թիւը հասնում է 10 միլլիոնի։

Թէ աշխատաւոր գիւղացիութեան և թէ պրոլէտարիատի շահերը մէկ են։ Ինչ որ վնասակար է մէկին—վնասակար է և միւսին։ Եւ ընդհակառակը—որքան լաւ ապրի գիւղացին, այնքան էլ լաւ կապրի բանուորը։ Գիւղացին էլ,

վարձու բանուոր-պրոլէտարն էլ ապրում են իրենց սեփական և ոչ թէ ուրիշի աշխատանքով։ Կնշանակէ Ռուսաստանի աշխատաւոր ժողովրդի մէջ գիւղացիները աւելի շատ են քան պրոլէտարները։ 1897 թ. վիճակագրութեան համաձայն գիւղացիների թիւը հասնում է 96,943,857 մարդու, այսինքն մի քանի անգամ աւելի շատ քան պրոլէտարներինը։ Բոլոր գործարանական բանուորներն էլ պրոլէտարներ չեն։ Դա չպէտք է մոռանալ, և չպէտք է խառնել պրոլէտարիատ խօսքը աշխատաւոր ժողովուրդ խօսքի հետ, որովհետև աշխատաւոր ժողովուրդ ասելով հասկացւում են թէ՛ պրոլէտարները և թէ գիւղացիները։ Այդքատութեան և այլ պատճառների շնորհիւ ժամանակի ընթացքում պրոլէտարների թիւը աւելի ու աւելի շատանում է։ Այնուամենայնիւ գիւղացիները պինդ կպած են իրենց հողին և միայն ծայրահեղ կարիքն է նրանց դարձնում պրոլէտարներ։

Անարդարութեան արմատը։

Հասկանալի է, որ գործարանական բանուորները ապրում են իրենց աշխատանքով։ Դա նրանց ապրուստի միջոցն է։ Գործարանական բանուորների աշխատանքի վրայ է հիմնուած և պետութեան ամբողջ արդիւնաբերութիւնը։ Սովամահ չլինելու համար բանուորը կամայ ակամայ պէտք է համաձայնի այն վարձատրութեանը, որը տալիս է նրան գործարանատէրը, որովհետև վերջինս ամեն մի անբաւական բանուորի փոխարէն դեռ աւելի արժան գնով, կարող է վարձել ուրիշ, նոյնպիսի ապքատ, սովամահ բանուորին։ Կնշանակէ ամբողջ պետութեան արդիւնաբերութիւնը կանգնած է բանուորների վրայ, իսկ բանուորները չնայելով իրենց ծանր աշխատանքին,

համարեա սովամահ են լինում։ Պարզ է, որ դա անարդարութիւն է։ Կնշանակէ ռուսական պետութիւնը հիմնուած է մի այնպիսի անարդարութեան վրայ, որից տանջւում է ոչ միայն գիւղացիութիւնը, ինչպէս վերը ցոյց տուինք, այլ և բանւորութիւնը։ Պետութեան այդպիսի կազմը ձեռնտու է միայն գործարանատէրերին, կալւածատէրերին և վաճառականներին, բայց ոչ երբէք աշխատաւոր ժողովրդին։

Կնշանակէ մեծ, պետական անարդարութեան արմատը, հիմքը կայանում է հետևեալում՝ լաւ է ապրում ոչ թէ նա, ով աշխատում է, այլ նա, ով ուրիշի, բանւորի քրտինքով է ապրում։ Այդ պատճառով ժողովրդական աղքատութեան, աշխատաւոր մարդկանց թշւառութեան հետ կողք կողքին ծաղկում և աճում են հարուստները, ժողովրդի շահագործողները։ Մէկի գրպանը դատարկ է, միւսներինը լիքը։ Մէկից վերջին ծուծն են հանում, միւսները՝ ճարպից տրաքւում։ Պարզ, անմիտ և զզւելի անարդարութիւն։ Շատերն են հասկանում և ատում այդ անարդարութիւնը։ Քանի որ այդ այդպէս է, հապա ինչի՞ վրայ է կանգնած այդ անարդարութիւնը։ Ինչո՞ւ նա չի կորչում, չի վերանում երկրիս երեսից։ Դա էլ դժւար չէ հասկանալ։ Վերցնենք օրինակ գիւղացուն։ Գիւղացին քաղցած է, աղքատ է, ճնշւած է նրա համար, որ քիչ հող ունի։ Նա կամայ ակամայ պէտք է կապալով վերցնի կամ կալւածատիրոջ, կամ պետական և կամ ուղէլնի հողերը։ Իսկ ինչի՞ցն է որ նա քիչ հող ունի։ Որովհետև շատ հող ունեն կալւածատէրերը, մեծ իշխանները, թագաւորական տունը, վաճառականները, եկեղեցիները ու վանքերը և ուրիշ մասնաւոր մարդիկ, որոնք նախօրօք իրենց ձեռքն են հաւաքել հողը։ Ամենաքիչ հողեր ունեն մինչև անգամ ազնուական չինովնիկները։

Կնշանակէ, գիւղացին տանջւում է միայն նրա համար,

որ հողից օգտւում է ոչ թէ նա, ով աշխատում է նրա վրայ, այլ նա ով չի աշխատում։ Պետութեան ներկայ կազմում հողը կարող է միայն ժողովրդի շահագործողների սեփականութիւն լինել, այժմ հողը մասնաւոր սեփականութիւն է կազմում։ Հողով այժմ առևտուր են անում, ծախում ու առնում են, և ժառանգութիւն թողնում։ Այդպիսով հողը կարող է մի որևէ ծրիակերից անցնել մի ուրիշ նոյնպիսի ծրիակերի ձեռքը։ Այդ է պատճառը, որ մի մարդու ձեռքում հաւաքւում է այնքան հող, որ մէկ մարդ ոչ մի դէպքում չի կարող իր սեփական աշխատանքով մշակել։ Սեփականատէրն էլ նրա համար հո՞ չէ առնում հողը, որ ինքը մշակի։ Նա աշխատում է այդ հողը կամ կապալով տալ կամ նոյն այդ գիւղացիներին բանւոր վերցնել։ Կնշանակէ հողի սեփականութիւնը օգնում է սեփականատէրերին առանց աշխատանքի, ուրիշների աշխատանքի հաշւով ապրելուն։ Նոյնն է և գործարաններում։ Սեփականատէր-գործարանատէրը ազատ է առևտուր անել բանւորների հետ ինչպէս իր քէֆն է տալի։ Բանւորը կամ սովամահ պէտք է լինի, կամ համաձայնի այն վարձատրութեան, որը տալիս է գործարանատէրը։ Չէ՞ որ հարուստ խանութներից, գործարաններից դուրս բանւորը ոչ մի տեղ չի կարող աշխատել։ Պետական ներկայ կարգերում գործարանները, ինչպէս և հողը, կազմում են մասնաւոր սեփականութիւն։

Կնշանակէ այդ մասնաւոր սեփականութիւնն է ռանչպարգիւղացիների և գործարանական բանւորների աղքատութեան և թշւառութեան ամենամեծ և ամենաուժեղ պատճառը։ Մի խօսքով, մասնաւոր սեփականութիւնը, աշխատաւոր ժողովրդի ամենամեծ չարիքն է։ Չէ՞ որ հէնց այդ մասնաւոր սեփականութեան վրայ է կանգնած ներկայ պետական կազմի ամենամեծ անարդարութիւնը։ Այդ միևնոյն մասնաւոր սե-

փականութեան շնորհիւ է, որ մի քանիսները հարստանում են, միւսները՝ աղքատանում, մի քանիսները կուշտ են, միւսները՝ քաղցած, մի քանիսները ուժեղ են, միւսները՝ թոյլ։ Մասնաւոր սեփականութեան շնորհիւ է, որ հարուստը—աղքատի մէջքին, ծրիակերը—բանւորի վզին են նստած։ Ուրիշ կերպ էլ չի կարող լինել։ Ամէն մի սեփականատէր մտածում է այսպէս՝ «իմ սեփականութիւնը—իմ արնի թիքան է, ինչ կուզեմ այն էլ կանեմ»։ «Ամէն մարդու համար իր շապիկն ամենից մօտ է իր մարմնին»։ Ահա իր այդ նոյն շապկի համար է, որ ծրիակերները բանւորների ուսերից քաշում են ուրիշի շապիկը, և իրենց լայն գրպանումն են պահում։ Բայց չէ՞ որ բանւորի համար էլ իր շապիկն է մօտ։ Միայն թէ բանը դրանում չէ, այլ նրանում, թէ ո՞վ է ծրիակեր, ով աշխատող, և ի՞նչ փողով է ծրիակերը առնում իր այդ շապիկը։ Կնշանակէ նոյն այդ մասնաւոր սեփականութիւնը թալանի և հարստահարութեան մի առանձին միջոց է, նա—ամենամեծ անարդարութիւնն է։ Եւ հէնց դրա վրայ է կանգնած ներկայ պետութեան բոլոր կարգերը։

Ի՞նչպէս և ինչի՞ վրայ է կանգնած այդպիսի անարդարութիւնը։

Պետութեան այդ կարգերը ծառնտու չեն աշխատաւոր ժողովրդին։ Բայց նրանք ձեռնտու են ժողովրդի շահագործողներին։ Հասկանալի է թէ ինչու ժողովրդի շահագործողները ամեն կերպ աշխատում են պահպանել այդ կարգերը։ Հասկանալի է, որ նրանք պետութեան այդպիսի կարգերը, ամենալաւ, ամենայարմար և մինչև անգամ ամենաուղիղն են համարում։ Նրանք ուղղակի ասում են էլ «այդ կարգերը արդարացի են», հետևապէս «մասնաւոր սեփականութիւնը սրբազան է և անձեռնմխելի», «ժողովուրդը սև ոսկոր է, իսկ ինքը շահագործողը—սպիտակ ոսկոր»։ Նրանք ասում են՝ «դիւղացին ու բանւորը հէնց նրա համար են ստեղծւած, որ մեզ համար աշխատեն։ Ժողովուրդը խաւար և չիմար է»։ Իսկապէս էլ ժողովրդի տգիտութիւնը և խաւարամտութիւնը միանգամայն ձեռնտու է ժողովրդի շահագործողներին։ Իսկ աւելի ևս ձեռնտու է վախկոտ, թուլամտրթ ժողովուրդը։ Ժողովրդի շահագործողների համար հարկաւոր է ճնշւած, հարստահարւած ժողովուրդ։ Հասկանալի է, որ ժողովրդի շահագործողները իրենց սեփական շահի համար ամեն կերպ աշխատում են ժողովրդին իրենց տակը, խաւարի և մթութեան մէջ պահել։ Նրանք այդպէս էլ անում են, և անում են շատ ճարպիկ կերպով։ Բայց չէ՞ որ դա այնքան էլ հեշտ չէ։ Չէ՞ որ ժողովրդի շահագործողների թիւը քանի քանի անգամ քիչ է աշխատաւոր ժողովրդից։ Ամեն մի շահագործողի վրայ օրինակ, կարելի է ասել, ընկնում է հազար բանւոր։ Եթէ նրանք իրար դէմ, ճակատ առ ճակատ դուրս գային, այն ժամանակ շահագործողները երբէք չէին կարողանայ դիմանալ բանւոր ժողովրդին։ Այդ պատճառով միշտ և ամեն տեղ նրանք բանւոր ժողովրդի հետ կռւում են զանազան, ծուռ ու մուռ ճանապարհներով ու միջոցներով։ Այսպէս օրինակ, հին ժամանակներից սկսած ժողովրդի շահագործողները իրենց ձեռքն են առել և պահում են պետական և հոգևոր իշխանութիւնը։ Պետական իշխանութիւնը նրանց հարկաւոր է—ինչպէս ոյժ, իսկ հոգևոր իշխանութիւն—խաբելու համար։ Այժմ պետական իշխանութիւնը գտնւում է ժողովրդի շահագործողների ձեռքում։

Ի՞նչ բան է պետական իշխանութիւնը։ Դա բոլոր օրէնքներն են, բոլոր պետական հաստատութիւններն են, բոլոր

պետական պաշտօնեաներն են սկսած ամենափոքր չինովնիկից մինչև ամենամեծ աստիճանաւորները. պոլիցիականից, ժանդարմից, նահանգապետից սկսած մինչև մինիստրները, թագաւորի խորհրդակիցները և ինքը թագաւորը: Դրանց ձեռքումն են գտնւում — թէ՛ օրէնքները, թէ՛ դատարանները և թէ վարչութիւնը, այսինքն գործադիր իշխանութիւնը: Դրանք հէնց իրենք էլ կազմում են օրէնքները: Նրանք էլ հէնց ստիպում են ժողովրդին հպատակւել այդ օրէնքներին, իսկ նրանց, որոնք չեն ուզում հպատակւել այդ օրէնքներին և կատարել նրանց հրամանները այդպիսիներին բռնում են, քշում են, բանտարկում են, կախում են «զսպում են» ոստիկանական և մինչև անգամ զինւորական ոյժով: Զինւորական ոյժն էլ գտնւում է ժողովրդի շահագործողների ձեռքում: Առաջի անգամից թւում է թէ կալւածատէրերը, գործարանատէրերը և այլ սեփականատէրերը ուրիշ են, իսկ չինովնիկները, և այլ պաշտօնական մարդիկը—ուրիշ: Բայց դա սխալ է. պետական իշխանութիւնների դիմակը դժւար չէ պատռել:

Օրինակ ռուսական կառավարութեան դէկը գտնւում է 648 նշանաւոր և յայտնի չինովնիկների ձեռքում: Այդ նշանաւոր չինովնիկներն են պետական գործերի ամենամեծ կարդադրիչները: Դրանք էլ միևնոյն ժամանակ թագաւորի խորհրդակիցներն են, մեծ իշխանների և ամբողջ թագաւորական տան ամենամօտ բարեկամները: Համարեա նրանք բոլորն էլ պալատական մարդիկ են: Նրանցից են նշանակւում այժմ մինիստրները, նահանգապետները, պետական խորհրդի անդամները և սենատորները: Կնշանակէ ամբողջ պետական իշխանութիւնը գտնւում է նրանց ձեռքումն: Բայց ովքեր են այդ 648 նշանաւոր չինովնիկները: Համարեա նրանք բոլորն էլ—կալւածատէրեր և խոշոր հողատէրեր են: Նրանց ձեռքումն է գտնւում մօտ $4^1/_2$ միլլիոն դեսիատին հող. կնշանակէ այդ չինովնիկներից ամեն մէկին

կլոր թւով ընկնում է մօտ 7 հազար դեսիատին հող: Ուրիշ խօսքով ասած, նրանք իրենց ձեռքն են առել ահագին քանակութեամբ հողեր: Կնշանակէ համարեա նրանք բոլորն էլ խոշոր կալւածատէրեր են: Նրացից շատերը պաշտօնում եղած ժամանակն են առնում հողը, միւսները ստանում են իրրև ժառանգութիւն: Այդ նշանաւոր չինովնիկների թւում կան մի քանի տասնեակ գրաֆներ, մի քանի տասնեակ իշխաններ, և մօտ 150 նշանաւոր ազնւականներ: Կնշանակէ այդ նշանաւոր չինովնիկները նախ և առաջ—կալւածատէրեր են, և երկրորդ—ազնւականներ: Բայց դա դեռ բոլորը չէ: Նրանց մէջ կան և՛ գործարանատէրեր, և՛ երկաթուղու գծի սեփականատէրեր, և՛ բանկիրներ և ուրիշ կապիտալիստներ:

Ահա թէ ում ձեռքումն է գտնւում պետական բարձրագոյն իշխանութիւնը՝ կալւածատէրերի, ազնւականների, գործարանատէրերի, և զանազան չինովնիկների ձեռքում: Կնշանակէ ամբողջ պետութիւնը նրանց ձեռքումն է: Նրանք են կառավարում երկիրը, օրէնքներ են հնարում, ի հարկէ այնպիսի օրէնքներ, որոնք իրենց ձեռնտու են և այդ օրէնքներով էլ դատում ու կառավարում են: Նրանցից ամենախոշորները նստած են վերևում: Նրանցից դուրս Ռուսաստանում կան շատ աւելի մանրերը: Աւելի մանր չինովնիկների մէջ էլ կան շատ կալւածատէրեր, ազնւականներ, գործարանատէրեր, և վաճառականներ: 1890 թ. օրէնքի համաձայն վաճառականների ձեռքումն են գտնւում քաղաքային դումաները, իսկ կալւածատէրերի ձեռքում—զեմստվոները: Այդ օրէնքի համաձայն քաղաքային դումաներում և զեմստվոներում կարող են բազմել, աշխատել, և կարդարութիւններ անել միայն հարուստ մարդիկ, իսկ գիւղացիները, բանւորները և ընդհանրապէս ամբողջ աշխատաւոր ժողովուրդը, որը

սեփականութիւն չունի, ինչպէս և ժողովրդի շահերը պաշտպանող, բայց ագքատ ու կրթուած մարդիկը, իրաւունք չունեն այնտեղ մտնելու։

Դուրս է գալիս որ, ժողովրդի շահագործողները ամբողջ պետական իշխանութիւնը վերևից մինչև ներքև, իրենց ձեռքն են առել։ Այդ շահագործողների հնարած օրէնքները պարզ է որ նրանց էլ պէտք է մեծ իրաւունքներ տան։ Այդ տեսակ մարդիկ շողոքորդում են (քսմսւում են) իշխանութեան և իրենց ձեռքումն են պահում ամբողջ կառավարութիւնը։ Պէտք է դիտենալ, որ այդ իշխանութիւնը նրանց ահագին օգուտներ է տալիս։ Օրինակ 648 նշանաւոր չինովնիկները պետական գանձարանից ամեն տարի ստանում են մօտ 30 միլլիոն բուբլի ռոճիկ, տան քրէհ, ճաշի փող, ճանապարհածախս, ընծաներ և այլն—կլոր թւով նրանց չինովնիկական—բանւորական ամեն մի ժամը արժէ 10 և մինչև անգամ 20 բուբլի, իսկ նրանց բանւորական օրը 150 բուբլի։ Դեռ չհաշուած այն փողերը, որը նրանք ամեն տեսակ անարդար ճանապարհներով ձեռք են բերում։ Ամենքն էլ գիտեն որ շատ պաշտօնեաներ, մանաւանդ ոստիկանները պլոկում են կենդանի մարդուց էլ, մեռածից էլ։ Վերջ ի վերջոյ դուրս է գալի, որ ժողովրդի շահագործողները պետական ներկայ անարդար կարգերում շատ լաւ են սարքում իրենց անհատական գործերը։ Նրանք կառավարութեան համար են, կառավարութիւնը նրանց համար, իսկ աշխատաւոր ժողովուրդը—թող ապրի ինչպէս գիտէ։ Դրա համար էլ չ'պէտք է զարմանալ, որ ռուսական պետութեան համարեա բոլոր օրէնքները կազմուած են ոչ թէ աշխատաւոր ժողովրդի, այլ ժողովրդի շահագործողների օգտին։ Օրինակ, հողի կապալով վերցնելու օրէնքը, գիւղատնտեսական բանւորի վճարելու օրէնքները, գործարանական ինսպեկտորների օրէնքը, արհեստաւորների վերաբերեալ օրէնքները, ոստիկանական և այլ հողարաւոր օրէնքները։ Կարելի է մինչև անգամ ասել, որ օրէնքը միշտ հարուստի ու ուժեղի կողմն է և ոչ թէ գիւղացու կամ բանւորի կողմը։

Օրինակ բանւորներին մինչև վերջին ժամանակներս խիստ կերպով արգելում էին գործադուլներ անել։ Գործադուլ անողներին դատում և բանտ էին նստեցնում, ինչպէս պետական յանցաւորներին։ Դուրս էր գալիս, որ երբ բանւորը իր խաղէյնի դէմ է գնում, կնշանակի նա կառավարութեան դէմ է գնում։ Մինչև այժմ էլ կան շատ ու շատ այնպիսի օրէնքներ, որոնց բանւորը իրաւունք չունի խախտելու թէ չէ խիստ պատժի կենթարկուի։ Բայց դա դէռ բոլորը չէ։ Օրէնքով ամեն մի իշխանութիւն, մանաւանդ, ոստիկանութիւնը իրաւունք ունի, ծաղրել, և ստորացնել բանւորին, պատժել, քշել ամենահասարակ խաղաղ գործադուլի համար և կախել եթէ նա հակառակուի ամենահասարակ աւազակ գօրգօվոյին։ Ամեն մի բանւոր-մարդ իր սեփական կաշի վրայ փորձել է այդ բոլորը։ Ամեն անգամ կառավարութիւնը մի ծակ գրտնում է դուրս գալու, պատասխանատուութիւնից ազատուելու համար։ Մինչև անգամ ամենաանօրէն բռնաբարողը կարդարանայ, իսկ բանւորը միշտ մեղաւոր կճանաչուի։ Դատարանին դիմելը բանւորի համար միայն աւելորդ ժամանակ կորցնել է նշանակում։ Մինչև այժմ օրէնքով հասարակ մարդը ոչ մի իրաւունքներ չունի։ Բոլոր իրաւունքները ժողովրդի շահագործողներն են յափշտակել։ Բանւոր մարդը, ռուսական օրէնքների համաձայն, պէտք է միայն աշխատի ու հպատակուի, իսկ միւս բոլոր բաները նրան չեն վերաբերում. բանւոր մարդը իր սեփական պետութեան մէջ ոչ թէ տեր է այլ սարուկ։

Ի՞նչպէս են ժողովրդին խաբում։

Կառավարութիւնը ամենից շատ աշխատում է ժողովրդին ճնշուած պահել, նրա համար, որ ժողովրդի շահագործողները կարողանան ազատ կերպով ծծել նրա վերջին հիւթը։ Որպէսզի ժողովրդի շահագործողներին հեշտութեամբ յաջողի այդ ամօթալի գործը տեսնել, նրանք դիմում են խորամանկութեան և խաբէբայութեան։ Հոգևոր իշխանութիւնը նրանց ձեռքումն է։ Օրինակ, քահանաները բեմից միայն այնպիսի քարոզներ են ասում, որոնք դուրեկան են կառավարութեան։ Շատ անգամ է պատահում, որ քահանաները քարոզ են կարդում միայն նրա համար, որ արդարացնեն ժողովրդի շահագործողներին, կալուածատէրերին, գործարանատէրերին, չինովնիկներին։ Քահանաները միշտ կրկնում են «Աղքատներ, մի՛ք նախանձի հարուստներին. դրանով երկնքի արքայութեանը կհասնէք»։ Իսկ այդ ժամանակ հարուստները իրենց գործերն են տեսնում երկրիս վրայ։ Շահագործողներին պաշտպանելու համար, քահանաները ասում են ժողովրդին որ ամեն մի իշխանութիւն «Աստուածանից է տրուած»։ և «յամենայն դէպս» պէտք է այդ իշխանութեանը հպատակուել։ Այժմ կառավարութեան հրամանով այրում են գիւղերը, թնդանօթներով քանդում են տները, գիւղացիներին մտրակում են, բռնաբարում են կանանց—և դուրս է գալի. որ այդ բոլորը Աստուածանից է և պէտք է հպատակուել։ Երբ ժողովրդի համբերութեան բաժակը լցւում է այն ժամանակ քահանաները մխիթարում են նրան երկնային արքայութեան յոյսով։ Եւ ընդհանրապէս ինչ էլ որ լինի—քահանաները համարեա երբէք աշխատաւոր ժողովրդի կողմը չեն պահում այլ կանգնած են կառավարութեան և հարուստների կողմը։ Կնշանակէ եկեղեցին ներկայ անարդար պետա-

կան կարգերում հոգևոր ծառան է, եկեղեցին ծառայում է այն անարդարութեան, որից տանջւում է աշխատաւոր ժողովուրդը։ Դուրս է գալի. որ եկեղեցին պետական իշխանութեան ձեռքին մի խաղալիք է։

Նոյնն է և դպրոցը։ Ներկայ կառավարութիւնը պինդ բռնած ունի իր ձեռքում ժողովրդական կրթութիւնը։ Նա միշտ ջանում է փոդ տալ այդ հարկաւոր և սուրբ գործի համար։ Կառավարութիւնը ստիպում է ուսուցիչներին երեխաներին հասկացնել, որ ներկայ պետական կարգերը — աւելի քան լաւ են, դրանից լաւը չի էլ հարկաւոր։ Իսկ եթէ մի որևէ ուսուցիչ համարձակւի ճշմարիտն ասել, քահանաները նրան յայտարարում են ածաստուած, «խռովարար» իսկ կառավարութիւնը նրան պաշտօնից վռնդում է։ Օրինակ դպրոցներում երեխաներին նոյնպէս սովորեցնում են որ նրանք հպատակւեն ամեն տեսակ իշխանութեան, և որ այդ իշխանութիւնը Աստուածանից է տուած և ոչ թէ ժողովրդի շահագործողներից։ Դպրոցում սովորեցնում են որ գիւղացին նրա համար է ստեղծուած, որ տիրոջը (աղային) ծառայի, որ սեփականութիւնը մի ինչ որ սրբութիւն է և ով նրան դէմ գնայ, նա կնշանակ է Աստուծու դէմ է գնում։ Շատ գիտութիւններ բոլորովին չեն մտցնում դպրոցներում, որպէսզի աշատաւոր ժողովուրդը բոլորովին չգիտենայ նրանց, Միւս առարկաները, որոնք թէև թոյլ են տրւում, բայց խեղաթիւրւում են։ Օրինակ ռուսաց պատմութիւնը։ Դպրոցներում սովորեցնում են, որ բոլոր ռուս թագաւորները ու իշխանները լաւ էին, իսկ ժողովրդի տանջանքները ուղղակի Աստուծոյ պատիժն էին նրանց մեղքերի համար։ Կառավարութիւնը հետևում է որ չլինի թէ գրքերում, լրագրներում և ամսագրներում մի այնպիսի բան տպւի, որը կառաւարութեան և ժողովրդի շահագործողներին անդուրեկան և ան-

ձեռնտու է։ Կառավարությունը չի թողնում որ ժողովրդական դրադարաններում և ընթերցարաններում լինեն այնպիսի գրքեր, որոնք ճշմարտություն են պարունակում։ Այդ բոլորը նրա համար են անում, որ ժողովրդին խավարի մէջ պահեն։ Այդ բոլորը նրա համար է անում, որ աշխատավոր ժողովուրդը չգիտենայ և չհասկանայ թէ ի՞նչու երկրիս վրայ նրա համար այնքան ծանր է կեանքը, իսկ նրա կեղեքողները—այքան կուշտ։ Կառավարությունը վախում է որ ժողովուրդը հասկանայ այդ բոլորը և նրա դէմ դնայ։

Կնշանակէ, դուրս է գալի որ ժողովուրդը աղքատ է նրա համար, որ նրա կեղեքողները հարուստ են. ժողովուրդը ճնշված է և իրավունքներից զրկված որովհետև նրա շահագործողները բոլոր իրավունքները իրենց ձեռքն են առել, վերջապէս ժողովուրդը խավար է որովհետև այդ խավարը ձեռնտու է նրա շահագործողներին։ Կնշանակէ ժողովրդական աղքատությունը, իրավազրկությունը և խավարը—երեք հարազատ քոյրեր են։ Նրանք բոլորն էլ իրար պաշտպանում են և բոլոր երեքն էլ իրենց ճանկերումն են պահում աշխատավոր ժողովրդին։

ԳԼՈՒԽ Բ.

ՈՐՆ Է ԱՐԴԱՐԱՑԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ։

Կռիվ անարդարության դէմ։

Ահա թէ ինչպիսի կարգեր, ինչպիսի անարդարություն է տիրում ռուսական պետության մէջ։ Այդ անարդարությաղ արմատներն էլ, ճիւղերն էլ իրար նման են։ Ռուսաստանի ամեն մի քաղաքացին այդ բոլորը պէտք է պարզ կերպով հասկանայ և լաւ յիշի։ Բայց միայն այդ չի հարկաւոր հասկանալ և յիշել։ Զպէտք է մոռանալ, որ ամեն մի անարդարության դէմ հարկաւոր է և պէտք է կռուել։ Երկրիս վրայ ոչ մի անարդարություն դոյություն չպէտք է ունենայ, լինի նա մեծ թէ փոքր, հին թէ նոր։ Ամեն մի անարդարությունն նախ և առաջ աշխատավոր ժողովրդի թշնամին է, որովհետև ամենից շատ նա է տուժում դրանից։ Ամեն մի բանավոր մարդ իր սրտում պէտք է գրի «Կորչեն ամեն տեսակ անարդարությունները»։ Մարդիկն են գործում անարդարություն, կնշանակէ մարդիկն էլ կարող են վերացնել նրանց։ Ներկայ անարդար պետական կարգերում որքան կարելի է շուտ, պէտք է մտցնել փոփոխություններ և ի հարկէ այնպիսի փոփոխություններ, որոնք օգտակար են ամբողջ աշխատավոր ժողովրդին։ Բայց ի՞նչպիսի փոփոխություններ։ Իսկապէս ի՞նչը պէտք է կերպարանափոխել և փոխել։ Եւ ի՞նչ միջոցներով պէտք է փոխել։ Ահա այդ բոլոր հարցերին հարկաւոր է ճիշտ և պարզ պատասխանը տալ։

Մասնաւոր և հասարակական սեփականութիւն։

Նախ քան չարիքի դէմ կռուելը, պէտք է գիտենալ թէ նա որտեղից է բղխում։ Դրա մասին արդէն խօսեցինք վերևում։ Աշխատաւոր ժողովրդի բոլոր չարիքները, բոլոր տանջանքները բղխում են նրանից, որ ներկայ կարգերում աշխատաւոր ժողովրդի մէջքին նստած են շահագործող սեփականատէրերը։ Կնշանակէ նրանց էլ պէտք է իր վզից ցած գլորի աշխատաւոր ժողովուրդը։

Ցած գլորել շահագործողներին. հեշտ է ասել։ Իսկ ինչպէս անել այդ։ Քանի որ ներկայ պետական կազմի գլխաւոր անարդարութիւնը բղխում է նրանից, որ մի քանիսները—սեփականատէրեր են, իսկ միւսները—ոչ մի սեփականութիւն չունեն, կնշանակէ պէտք է ծգտել՝ մի որևէ կերպ սանձահարել այն չարիքները, որոնց ենթարկւած է ամբողջ աշխատաւոր ժողովուրդը մասնաւոր սեփականութեան շնորհիւ։ Բայց ինչպէս այդ անել։ Գուցէ վերցնենք հարուստների ամբողջ սեփականութիւնը և բաժանենք աղքատներին։ Պարզ է որ այդ կերպ աղքատները մի առ ժամանակ մի քիչ կ'հարստանան, իսկ հարուստները կ'աղքատանան։ Բայց դրանից յետոյ կանցի 10—20 տարի, գուցէ աւելի քիչ,—և նորից դուրս կգան հարուստներ, որոնք ամեն տեսակ արդար ու անարդար ճանապարհներով իրենց ձեռքում կդիզեն փողերն էլ, հողն էլ, գործարաններն էլ, երկաթուղիներն էլ, նաւագնացութիւնն էլ, հանքերն էլ, և մեռնելու ժամանակ էլ կ'կտակեն իրենց ժառանգներին որոնք աւելի ևս կհարստանան։ Կնշանակէ հարուստների սեփականութիւնը խլել և աղքատներին բաժանել—յիմարութիւն է։ Դա միայն արիւնահեղութեան տեղիք կտայ, որովհետև հարուստները, որոնց ձեռքում գտնւում է պետական իշխանութիւնը, իրենց բարի կամքով չեն տայ հարստութիւնը։ Կնշանակէ գործին այդ կողմից

չպէտք է մօտենալ։ Պէտք է այնպէս անել, որ աշխատաւոր ժողովուրդը չաղքատանայ իսկ ժողովրդական շահագործողները չկարողանան հարստանալ։ Իսկ դրա համար հարկաւոր է ամեն տեսակ մասնաւոր սեփականութիւնը դարձնել հասարակական սեփականութիւն։ Իսկ ի՞նչպէս դրան հասնել։ Դրա մասին պէտք է հարցնել գիւղացիներին—նրանք շատ լաւ գիտեն թէ ինչ բան է հողի հասարակական սեփականութիւնը։ Այ օրինակ Իվանովսկի գիւղական հասարակութիւնը։ 1861 թ., գիւղացիների թւի համաձայն նրան տւած էր 2000 դեսիատին հող։ Այդ հողը իրենք գիւղացիները բաժանեցին իրենց մէջ։ Բաժանելու ժամանակ, նրանք ամենայն արդարութեամբ հաշիւ էին անում թէ որ ընտանիքը ինչքան հող կարող է մշակել։ Բաժանում էին բոլորը միասին, ամբողջ հասարակութիւնը, ճշմարտութեամբ և արդարութեամբ։ Աչքի առաջ էին առնում բոլոր մանրամասնութիւնները։ Անցաւ մի քանի տարի։ Մի քանիսները մեռան, միւսների երեխաները մեծացան։ Մի քանիսներին չէր բաւականացնում տւած հող, միւսների հողերը երեսի վրայ էին ընկած բանւորական ձեռքերի պակասութեան պատճառով։ Այդ պատճառով Իվանովսկի գիւղական հասարակութիւնը վճռեց վերաբաժանել ամբողջ հողը, հողային անարդարութիւնը վերացնելու համար։ Գիւղական հասարակութիւնը հաւաքւեց և նորից բաժանեց հողը։ Անցաւ մի քանի տարի, նա նորից բաժանեց հողը։ Ի՞նչ բան է հողի այդ բաժանումը։ Դրա մասին հարկաւոր է մտածել և լաւ մտածել։ Դա շատ կարևոր և լաւ գործ է։ Բանը նրանումն որ այն երկու հազար դեսիատին հողը, որը 1861 թ. ստացաւ Իվանովսկի գիւղական հասարակութիւնը—ընդհանուր հարստութիւն է, ընդհանուր, այսինքն բոլոր իվանովցիների հասարակական սեփականութիւնը։ Այդ երկու

հաղար դեսիատին հողի տերը բոլոր իվանովցիներն են միասին։ Այդ հողից օգտվելու համար նրանք այդ հողը բաժանում են աշխատավորների և բողոքի թվի համաձայն։ Կնշանակի նրանց մոտ հողատիրությունը անբաժան հասարակական է, իսկ հողաշահությունը—մասնավոր։

Հողատիրություն և հողաշահություն։

Այսպես ուրեմն հողաշահությունը ուրիշ է, հողատիրությունը ուրիշ։ Հողատիրությունը հողը տրվում է ընդմիշտ, իսկ հողից շահվողին —միայն որոշ ժամանակով։ Դադարեցիր հողից շահվել, այսինքն դադարեցիր մշակել, տուր այդ հողը ուրիշին, ով որ կարիք ունի, միայն թե նա ոանչպար լինի, այսինքն բանվոր մարդ լինի։

Այ թե ինչպես է Իվանովկի հասարակությունը կանոնավորում հողային հարցը։ Իվանովցիները չեն էլ ուզում գիտենալ ի՞նչ է հողի մասնավոր սեփականությունը։ Դրա փոխարեն նրանք վաղուց արդեն մոցրել են հողի հասարակական սեփականությունը։

Եվ դա ոչ միայն Իվանովցիների մոտ է այդպես այլ շատ ու շատ ուրիշ գիւղական հասարակությունների մեջ։ Հողերի այդպիսի հասարակական սեփականությունը - ամենասովորական բան է համարեա այն բոլոր տեղերում, որտեղ ապրում են ռուս գիւղացիները—Ռուսաստանում, Սիբիրում, Կովկասում։ Ռուսական գիւղացիների նման, այդպիսի հասարակական սեփականություն են մոցրել իրենց մոտ նաև շատ գերմանական գաղութները, որովհետև տեսան որ դա արդարացի և յարմար բան է։ Այդպիսի հողատիրությունը շատ ու շատ գիւղացիներին փրկել և փրկում է հողազրկությունից։ Ամեն մի համայնական գիւղացի իրավունք ունի ստանալ իր բաժին հողը, իր սեփական աշխատանքով մշակելու համար։ Պարզ բան է—այդպիսի կարգերը արդարացի են և ուղիղ։

Բայց պետական ներկայ կարգերում, դա էլ չի փրկում գիւղացուն ադքատությունից և տանջանքներից։ Եվ ահա թե ինչու։—Գիւղացիների ձեռքին շատ քիչ հող կայ, որովհետև հողերի մեծ մասը ամեն տեսակ արդար ու անարդար ճանապարհներով իրենց ձեռքն են առել կալվածատերերը, աղնվականները, վաճառականները, մեծ իշխանները, թագավորները, վանքերը և ուրիշ մասնավոր հողատերերը։ Եթե դա չլիներ, գիւղացիները բավականաչափ հող կունենային։ Այն ժամանակ նրանք հողի քչությունից չէին տանջվի։ Կնշանակի ամբողջ գիւղացիական աշխատավոր ժողովրդի օգտի համար հարկավոր է ծգտել որ հողը մասնավոր սեփականատերերի ձեռքից, որոնք այդ հողի վրայ չեն աշխատում, անցնի այն գիւղացիների ձեռքը որոնք աշխատում են նրա վրայ։

Հողի սոցիալիզացիան։

Բայց դա դեռ բոլորը չէ։ Հարկավոր է որ երկրագործ —գիւղացիները իրենք բաժանեն ամբողջ հողը արդարությամբ և ճշմարտությամբ և որ ամբողջ ռուսական պետության մեջ հողը կանոնավոր կերպով բաժանվի բոլոր նահանգների, բոլոր գավառների, բոլոր գիւղական հասարակությունների մեջ։ Հարկավոր է, որ իւրաքանչիւր հասարակության մեջ իրենք համայնականները զբաղվեն հողի բաժանելու գործով։ Այդպիսի մի կարևոր գործ չի կարելի յանձնել կաղնային մինև որ բոլոր պետական գործերը չանցնեն ժողովրդի ձեռքը, այսինքն ժողովրդի ներկայացուցիչների ձեռքը։ Հարկավոր է

որ ինքը աշխատաւոր ժողովուրդը լինի ամբողջ հողի տէրն ու տիրականը և որ զանազան գիւղական հասարակութիւնների մէջ հողը բաժանուի այդ հասարակութիւններից ընտրուած մարդկանց ձեռքով. նոյն այդ ընտրուածները պէտք է վճռեն առանձին հասարակութիւնների մէջ ծագած ամէն տեսակ հողային վէճերը, և վարեն իրենց շրջանի բոլոր հողային գործերը: Իսկ շրջանային ներկայացուցիչները պէտք է բաժանեն հողը շրջանների մէջ և վճռեն շրջանների մէջ ծագած հողային վէճերը: Գաւառներից ընտրուածները նոյնը պէտք է անեն գաւառների համար, իսկ նահանգներից ընտրուածները—նահանգների համար: Շրջանից ընտրուածները պէտք է հսկեն և անտառների վրայ—թէ արդեօք ինչպիսի անտառները բաժանել, ինչպիսիները պահել, որպէսզի գետերը չբարակեն և ամբողջ պետութեանը վնաս չհասնի: Նոյնպէս և ջրերը, ձկնորսութիւնը և մինչև անգամ հողի դոդը — այդ բոլորի վրայ պէտք է հսկեն ժողովրդական ներկայացուցիչները: Մի խօսքով—բոլոր հողերը ինչքան որ կան պետութեան մէջ պէտք է անցնեն ժողովրդի ձեռքը յանձին նրա ընտրեալ մարդկանց և տեղական և համառուսական ընտրողական հաստատութիւնների ձեռքը, որոնց ձեռքում, այսինքն ժողովրդի, պէտք է գտնուի ամբողջ իշխանութիւնը և որոնք պէտք է վարեն բոլոր տեղական և պետական գործերը: Այդ դէպքում Ռուսական կայսրութեան մէջ գտնուած բոլոր հողերը կանցնեն այն մարդկանց ձեռքը, որոնք իրենց աշխատանքով մշակում են այդ հողերը, այն ժամանակ այդ ռանչպար—աշխատաւորները կլինեն հողի տէրն ու տիրականը: Այդ տէրերը իրենք կխլեն հողերը այն մարդկանցից, որոնք չեն մշակում և կտան նրանց որոնք մշակում են: Եւ բոլոր աշխատաւորները հող կունենան, բայց ոչ թէ իբրև սեփականութիւն այլ միայն նրանից օգտուելու, շահուելու հա-

մար: Ուրիշ խօսքով ասած, այդպիսի կարգերում հողը կլինի ոչ թէ մասնաւոր սեփականութիւն, այլ հասարակական կամ ինչպէս առհասարակ ասում են սոցիալական: Դրա համար էլ ասում են թէ այդպիսի կարգեր մտցնել նշանակում է հողը սոցիալիզացիայի ենթարկել, այսինքն դարձնել հասարակական սեփականութիւն և յանձնել հասարակութեան, ժողովրդի, տեղական ընտրողական հաստատութիւնների ձեռքը: Այդ պատճառով այդպիսի կաղմը կոչւում է հողի սոցիալիզացիա: Այդպիսի կարգերում ամբողջ պետութեան մէջ չեն լինի մասնաւոր հողատէրեր, ոչ խոշոր, ոչ մանր, որովհետև ամբողջ հողի սեփականատէրը կլինի ինքը ժողովուրդը, ամբողջ ժողովուրդը: Կնշանակէ հողատիրութիւնը կլինի համաժողովրդական, իսկ հողաշահութիւնը կանցնի նրանց ձեռքը, որոնք կուզեն մշակել այդ հողը իրենց սեփական աշխատանքով, և միայն այնքան ժամանակով, որքան որ նրանք աշխատում են այդ հողի վրայ: Այդպիսի կարգերում սեփականութիւնը այլ ևս խոչնդոտ չի հանդիսանայ աշխատաւոր ժողովրդի և նախ և առաջ հողագործ—գիւղացիների երջանկութեան համար: Այդ պատճառով, եթէ ուզում ենք արմատախիլ անել պետութեան անարդարացի կարգերը, նախ և առաջ հարկաւոր է ծդտել հողի սոցիալի ացիային: Դա, գիւղացիական բարօրութեան առաջին աստիճանն է:

Այժմ Ռուսաստանում միանգամայն հնարաւոր է հասնել հողի սոցիալիզացիային: Միայն Եւրոպական Ռուսաստանի 46 նահանգներում (չհաշուելով Սիբիրը, Կովկասը, Անդրկասպեան երկրները, Լեհաստանը) ներկայումս կայ մօտ 382 միլ. դեսիատին վարելահող: Դրանից 125,873,547 դեսիատինը գտնուում է ռանչպար—գիւղացիների և գիւղական հասարակութիւնների ձեռքում, 95.680,625 դեսիատին աղնրականների և մասնաւոր սեփականատէրերի ձեռքում, 10.016,216

դեսիատին եկեղեցիների, վանքերի և այլ հաստատութիւնների ձեռքում, 7.900,000 դեսիատին թագաւորական տան ձեռքում, և մօտ 150.000,000 դեսեատին կազնայի ձեռքում: Բոլորին յայտնի է, թէ ի՞նչպէս են գիւղացիները ցանկանում իրենց ձեռքը առնել հողերը: Բոլորին յայտնի է, թէ որքան լաւ և արդարութեամբ են բաժանում նրանք հողերը: Կնշանակէ, հողի սոցիալիզացիայի ենթարկելու առաջին միջոցը պէտք է լինի խլել հողերը զանազան, իրենց ձեռքերով չմշակող, մասնաւոր սեփականատէրերից, ինչպէս են կալուածատէրերից, թագաւորական տնից, եկեղեցիներից, վանքերից, կազնայից, և յետոյ այդ բոլոր հողերը յանձնել գիւղացիների ձեռքը: Հողերը պէտք է խլուեն թէկուզ նրան; ներկայ սեփականատէրերի կամքին հակառակ: Միևնոյն ժամանակ խլել առանց յետ դնման: Հասկանալի է, որ ներկայ սեփականատէրերը, կասեն և այժմ էլ ասում են թէ «մեր կամքին հակառակ խլել մեր հողերը — դա անարդարութիւն է, վիրաւորանք է, թալան է»: Ի՞նչ անես, թող վիրաւորուեն: Մի բան որ նրանք իրենց վիրաւորանքի հետևը չեն տեսնում համաժողովրդական վիրաւորանքը: Այն ինչ որ արդարութիւն է նրանց համար, կատարեալ անարդարութիւն է ամբողջ աշխատաւոր ժողովրդի համար: Ինչ որ նրանց համար լաւ է, աշխատաւոր ժողովրդի համար վատ է: Ժողովուրդը նրանց համար ձի չէ, որի վրայ նրանք առանց այն էլ ամբողջ հարիւրաւոր և հազարաւոր տարիներ հեծած ման են եկել: Մի քանի հողատէր-կալուածատէրերը իրենք հասկանում են, որ գիւղացիութեան դրութիւնը չափից դուրս անկարելի ծանր է, և որ հարկաւոր է մի փոքր հող աւելացնել նրանց հողաբաժիններին: Դրա համար էլ այդպիսի կալուածատէրերը ասում են՝ «մենք համաձայն ենք գիւղացիներին տալ մեր հողերի մի մասը, միայն ի հարկէ, եթէ նրանք դրա համար մեզ

տան «կարգին» և «արդարացի» վարձատրութիւն: Բայց դա ի՞նչ է նշանակում: Դա, ուրիշ խօսքով, նշանակում է «լաւ գին, լաւ փող»: Բայց դա արդարացի՞ է արդեօք և պէ՞տք է գիւղացիները վճարեն փող այդ հողերի համար: Ոչ, ամբողջ հողը, ինչքան որ կայ կալուածատէրերի ձեռքում, պէտք է խլել յօգուտ աշխատաւոր ժողովրդի առանց որևէ վարձատրութեան, առանց յետ դնման: Եւ դրանում ոչ մի անարդարութիւն չկայ և չի կարող լինել: Իսկապէս էլ այդ պարոն կալուածատէրերը ոնրանցից են ձեռք բերել այդքան հողերը: Գուցէ իրենց արդար աշխատանքով են ձեռք բերել: Բայց չէ՞ որ մենք գիտենք, որ արդար աշխատանքով հասարակ քարէ տուն էլ չեն կարողանում ձեռք բերել, ուր մնաց այդքան ահագին հողեր: Այդ բոլոր հողերը կամ ամեն տեսակ արդար ու անարդար ճանապարհներով խլուած են կամ թագաւորներն ու թագուհիներն են բաշխել, իբր թէ ինչ որ ծառայութիւնների համար, կամ փողով են գնուած: Բայց ոնրտեղից են այդ պարոն կալուածատէրերը ձեռք բերել այդքան փողերը: Նրանք ուղղակի կամ կաղնան են թալանել, կամ զանազան արդար ու անարդար ճանապարհով, առանց որևէ աշխատանքի:

Կնշանակէ, ոչ նրանց հողերը, ոչ էլ այն փողը, որով գնել են այդ հողերը, իրենց աշխատանքով չեն ձեռք բերուած. առանց խաբէութեան, առանց թալանի և առանց բռնութեան այդ գործը գլուխ չէր գայ: Եթէ դա այդպէս է ուրեմն յետ դնման մասին խօսք անգամ չի կարող լինել: Արդէն ամբողջ հարիւրաւոր տարիներ պարոն կալուածատէրերը օգտուել են առանց աշխատանքի ձեռք բերած հողերից: Բաւական է, ժամանակ է, որ աշխատաւոր ժողովուրդն էլ շահուի այդ հողից այնպէս ինչպէս հարկն է: Ժողովուրդը շատ լաւ գիտէ թէ ինչ են նշանակում այդ, պալատականների, ազնուականների, չինովնիկ-

ների և կաղնայի սարքած «յետ գնումը» և «յետ գնման վճառները»։ Այդպիսի վճառներ գիւղացիութիւնը շատ ու շատ հաղարաւոր միլլիոններ է տուել ու տուել, որոնք և շատ ու շատ արցունքներ են քամել։ Բաւական է—ժողովուրդը այժմ ոչ մի յետ գնման փողեր այլ ևս չպէտք է տայ։ Եւ եթէ մինչև անդամ մի որևէ տեղի գիւղացիները կվճռեն հողի համար փող տալ, դա ոչ թէ արդարութիւն կլինի այլ միայն ողորմութիւն—ահա քեզ պարոն կալուածատէր, մի քիչ փող, որպէսզի քեզ այնքան էլ ծանր չլինի առաջին ժամանակներում, մինչև որ դու և քո ընտանիքը աշխատանքի սովորէք։ Բայց չէ որ ողորմութիւնը—ողորմութիւն է, իսկ արդարութիւնը—արդարութիւն։

Հասարակական հողատիրութիւն, հասարակական հողաշահութիւն և հասարակական արտադրութիւն։

Բայց ահա մի հարց՝ արդեօք երկրիս երեսից կվերանայ աղքատութիւնը, երբ հողը ամբողջ աշխատաւոր ժողովրդի սեփականութիւն դառնայ։ Բաւական է արդեօք դրա համար միայն հողի սոցիալիզացիան։ Չէ՞ որ ժողովուրդը տարէց տարի աճում է։ Իսկ հողի քանակը կարծես թէ մնում է միևնոյնը։ Կնշանակէ այսպէս թէ այնպէս կգայ մի ժամանակ, երբ մարդիկ, նորից հողի քչութեան պատճառով չեն գիտենայ ուր գնան։ Կգայ ժամանակ, երբ նորից մարդաղլուխ կ'ընկնի 1 կամ կէս դեսիատին հող։ Այն ժամանակ որտեղից ձեռք բերեն բոլորի համար հաց։ Դրա մասին հարկաւոր է մտածել։ Առաջին անդամից դա շատ սարսափելի է թւում և կարծես թէ վերջ ի վերջոյ սովի ճանկերից ոչ մի կերպ չես կարող ազատուել։ Բայց դա սխալ է։ Մեծ թշուառութեան դէմ էլ կան մեծ միջոցներ։ Չէ՞ որ կարելի է միևնոյն քանակութեամբ հողից ստանալ զանազան քանակութեամբ բերք։ Մինչև անդամ միևնոյն հողից մէկը ստանում է աւելի շատ բերք, քան ուրիշը, նայած հողի մշակելու ձեւին։ Որտեղ լաւ են մշակում, այնտեղ էլ լաւ բերք են ստանում։ Իրենք գիւղացիները շատ լաւ գիտեն թէ ի՞նչ ճանապարհներով կարելի է լաւ բերք ստանալ։ Բայց բանը նրանումն է, որ բոլոր այդ միջոցները թանգ արժեն։ Կամ հարկաւոր են թանկագին պարարտացնող նիւթեր, կամ լաւ մեքենաներ, կամ լաւ սերմացուներ։ Ամեն մի գիւղացի չի կարող այդ բոլոր միջոցները ձեռք բերել։ Բայց շատ տեղերում, թէ Ռուսաստանում, թէ արտասահմանում, փողի պակասութեան դէպքում, գիւղացիները կարողանում են գործը դլուխ բերել՝ ամեն մէկը տալիս է իր մասը, և այդպիսով թանկագին, լաւ մեքենաներ առնում, որից բոլորն էլ օգտւում են։ Օրինակ Ստավրոպոլի նահանգում մի քանի գիւղական հասարակութիւններ ունեն իրենց սեփական և հասարակական շոգեկալեր, էլ չեմ ասում ուրիշ մեքենաների մասին։ Այդ բոլոր մեքենաները—ընդհանուր սեփականութիւն են, համագիւղացիների ընդհանուր հարստութիւն։ Այդպիսի մեքենաները մի քանի օրում անում են այն, ինչ որ ձեռքով չի կարելի մի ամսւայ մէջ էլ անել։ Մեքենան մէկի ձեռքից անցնում է միւսի ձեռքը, և բոլորին էլ ծառայում է։ Մեքենան վարում է, հնձում է, կալսում է։ Ռուսաստանի շատ նահանգներում գիւղացիները շատ լաւ են հասկացել հողի մշակման այդպիսի ձևի յարմարութիւնը։ Դրա շնորհիւ ոչ թէ միայն ժամանակն է խնայւում, այլ և լաւ է մշակւում հողը, որի շնորհիւ և լաւ բերք է ստացւում։

Մի քանի գիւղացիներ այլ ևս իրենց հողերը մաս մաս

չեն բաժանում. նրանք իրենց բոլոր հողերը միասին են վարում. բայց կարելի է այսպէս էլ անել՝ երկրագործները ոչ թէ միայն ընդհանուր սեփականատէրեր են, այլ և բոլորը միասին էլ շահւում են հողից, միասին առնում են լաւ սերմացուներ, որի շնորհիւ աւելի արժան են նստում, միասին ցանում են, հնձում են, կալսում են և բոլոր ստացած խոտն ու հացը բաժանում են իրենց մէջ արդարութեամբ։ Դուրս է գալի, որ նրանց մօտ հողատիրութիւնն էլ, հողաշահութիւնն էլ, արտադրութիւնն էլ ընդհանուր են։ Ստացած հացը, ի հարկէ, կբաժանեն, այնպէս որ ամեն մէկը ստանայ այնքան, ինչքան աշխատանք որ թափել է։ Այդպիսով արդարութիւնը ոտնակոխ չի անւում, իսկ ծրիակերները ոչ մի եկամուտ չեն ստանում։ Միայն հասակաւորներն ու փոքրահասակները, հիւանդներն ու կարօտեալները կարող են հասարակական հաշւով ապրել։ Այդպիսի հասարակական արտադրութեան դէպքում բոլոր աշխատաւորներն էլ ահագին օգուտ են ստանում։ Նրանք վաստակում են թէ՛ ժամանակ, թէ՛ աշխատանք և թէ փող։ Նրանք աւելի լաւ հացով են կերակրւում։ Այդպիսով, կնշանակէ, նախ և առաջ կարելի է մի դեսիատին հողից աւելի մեծ քանակութեամբ հաց ստանալ, և երկրորդ—կարելի է խնայել ժամանակ ուրիշ աշխատանքի համար։

Բայց դրանք դեռ հասարակական արտադրութեան բոլոր լաւ կողմերը չեն։ Գտնւած են և հեղհեղ գտնւում են հողից առատ բերք ստանալու զանազան միջոցներ։ Այդպիսի միջոցներ շատ կան։ Նրանցից մի քանիսը շատ թանգ են և մեծ ծախքեր, մեծ կապիտալ են պահանջում։ Աղքատ մարդիկ դրանցից կարող են օգտւել միմիայն փսոնով։ Դրա շնորհիւ ամենաթանկագին միջոցներից անգամ կարողանում են օգտւել աղքատ մարդիկ։ Այդ պատճառով երբ ժողովրդի

թիւը կմեծանայ, նա կամաց կամաց ստիպւած կլինի փոսնով էլ մշակել հողը, որպէսզի կարողանայ նրանից աւելի մեծ եկամուտ ստանալ, միասին, ընդհանուր ոյժերով կառնեն մեքենաներ, միասին կցանեն, միասին կհնձեն։

Կնշանակէ, կգայ մի այնպիսի ժամանակ, երբ ռանչպարգիւղացիները միասին կլինեն հողի տէրը, միասին կշահւեն հողից և միասին կաշխատեն։ Դրա շնորհիւ կարելի կլինի մի դեսիատին հողից աւելի շատ հաց ստանալ, քան թէ այժմ։ Բացի դրանից, կարելի կլինի պաղաբեր դարձնել այնպիսի տեղեր, որոնք այժմ անպտղաբեր են։ Բայց դա էլ դեռ բոլորը չէ։ Զէ որ տարէց տարի գիտնական մարդիկ հնարում են նորանոր բարեփոխութիւններ գիւղատնտեսութեան մէջ։ Գտնում են թէ ի՞նչ կերպ աւելի լաւ պարարտացնել հողը, աւելի լաւ վարել, հնարում են զանազան նոր մեքենաներ։ Հնարում են շատ այն տեսակ բաներ, որոնք, սրանից մի հարիւր տարի առաջ մարդու մտքովն անգամ չէր անցնի։ Զէ որ զուր տեղը չեն գիտնական մարդիկ հաց ուտում։ Զէ որ գիտութիւնն ու կրթութիւնը—մեծագոյն ոյժերն են։ Դրանք առանց այն էլ արդէն շատ բան են փոփոխել մարդկային կեանքի մէջ։ Օրինակ, վաղուց է որ գտնւած են երկաթուղիները, շոգենաւերը, հեռագրները, հեռախօսները, ելէքտրական լապտերները և հաղարաւոր ուրիշ մեքենաները։ Իսկ այդ բոլոր գիւտերը սիանգամայն փոխեցին թէ՛ գիւղական, թէ՛ քաղաքային և թէ միջազգային ամբողջ կեանքը։ Ամեն մի մեքենայի մէջ, ամեն մի գիւտում երևում է մարդկային խելքի ոյժը, գիտութիւնը։ Այդպէս էլ կլինի միշտ։ Գիտութիւնը երկրագործութեան համար շատ բան է արել, և շատ էլ կանի։ Այժմ արդէն, օրինակ, գիտնականները առաջուց կարող են ասել, թէ այս ինչ բոյսի աճելու համար ի՞նչ քանակութեամբ զանազան սննդարար նիւթեր են հարկաւոր. և ահա

վերցնում են այդպիսի պարարտացնող նիւթ և դնում են այն քանակութեամբ, որ հարկաւոր է բոյսի աճման համար. այդ ժամանակ լաւ բերքը արդէն ապահովուած է: Միայն ցաւը նրանումն է, որ այդպիսի պարարտացնող նիւթերը թանգ արժեն: Բայց վերջ ի վերջոյ դրանք էլ կէժանանան— կգտնուեն աւելի էժան գնով ձեռք բերելու միջոցները—և այն ժամանակ անպտուղ հողերն էլ բերք կտան:

Կնշանակէ գիտութեան և կրթութեան ու հասարակական արտադրութեան շնորհիւ հողը աւելի ու աւելի շատ բերք կտայ: Հետևապէս ինչքան էլ մարդիկ չբազմանան, բոլորը մէկ է, սովից չեն մեռնի, եթէ ի հարկէ, նրանց պետական ու հասարակական կարգերը կազմած լինեն լաւ և արդարացի կերպով: Իսկ այժմ ի՞նչ ենք տեսնում մենք: Ամեն մի աղքատ-ռանչպար իր կաշուցն է դուրս գալի: Գրպանը դատարկ, կրթութիւն չունի, միայն մտածում է թէ ի՞նչպէս անի, որ սովից չմեռնի, ընտանիքը պահի, ամեն մի նորութիւնից վախում է, իրեն շուրջը չի տեսնում և չի ճանաչում իր բարեկամներին և խորհուրդ տուողներին: Նրա շուրջը ամեն տեղ կամ մրցակիցներ են կամ թշնամիներ: Մրցակիցները—նոյնպիսի աղքատներն են, ինչպէս ինքը, իսկ թշնամիները—ժողովրդի շահագործողները, որոնց ձեռքում գտնուում են թէ՛ սեփականութիւնը, թէ կապիտալը, թէ պետական իշխանութիւնը:

Գործարանների, զաւոդների սոցիալիզացիան:

Այսպէս ուրեմն, հողի սոցիալիզացիան—առաջին քայլն է: Դրան պէտք է հետևի երկրորդ քայլը—արտադրութեան և ամբողջ երկրագործական տնտեսութեան սոցիալիզացիան:

Պէտք է զարգանայ հասարակական տնտեսութիւնը, գործադրելով արտադրութեան այնպիսի կատարելագործուած միջոցներ, որոնք մատչելի չեն առանձին մանր երկրագործին. այդ նոյն հասարակական տնտեսութիւնը պէտք է ընդգրկի նա և ամբողջ գործարանական արտադրութիւնը: Գիւղացիներին կեղեքում է հողի մասնաւոր սեփականութիւնը, իսկ գործարանական և այլ բանուորներին կեղեքում է գործարանների, հանքերի, շոգենաւերի, երկաթուղիների մասնաւոր սեփականութիւնը: Թէ՛ առաջիններին և թէ երկրորդներին կեղեքում է այն, որ ամեն ինչ պատկանում է ոչ թէ աշխատաւոր ժողովրդին, ոչ թէ ամբողջ հասարակութեան այլ մի քանի մարդկանց, ժողովրդական շահագործողների խմբակին: Մասնաւոր սեփականութիւնը միշտ և ամեն տեղ միևնոյն բանն է անում՝ նա շահագործողին, բանուոր մարդու մէջքին է շալակում: Գործարանական բանուորներին այդ ցաւից ազատելու համար պէտք է գործարանների, հանքերի, երկաթուղիների, և ամեն տեսակ մեքենաների հետ վարել ճիշտ այնպէս, ինչպէս և երկրագործութեան հետ: Գործարաններն էլ, զաւոդներն էլ, երկաթուղիներն էլ, հանքերն էլ, շոգենաւերն էլ, բոլոր մեքենաներն էլ, պէտք է դառնան ամբողջ աշխատաւոր ժողովրդի սեփականութիւն: Պէտք է սոցիալիզացիայի ենթարկուի ոչ միայն հողը (թէ քաղաքային և թէ գիւղական) այլ և երկրագործական տնտեսութիւնը և դրա հետ միասին գործարանները և զաւոդները: Նրանցից ոչ մէկը մասնաւոր սեփականութիւն չ՛պէտք է լինի: Նրանք բոլորը պէտք է լինեն համաժողովրդական, հասարակական սեփականութիւն: Այդ բոլոր հարստութիւնների տէրը պէտք է լինի ամբողջ աշխատաւոր ժողովուրդը, միայն նա, միևնոյն ժամանակ, անբաժան և յաւիտենական տէրը: Զրիակերներ ոչ մի տեղ չպէտք է լինեն, ո՛չ գիւղերում, ո՛չ քաղաքներում. ամեն մէկը

մի որևէ բանում և մի որևէ տեղ պէտք է աշխատի—հողի վրայ, մեքենաների վրայ և այլն։ Ամեն մէկը իր աշխատանքը պէտք է տայ ամբողջ պետութեան։ Ամբողջ պետութեան իսկական տէրը պէտք է լինի միմիայն աշխատաւոր ժողովուրդը։ Բայց նա ոչ միայն պէտք է տէրը լինի, այլ և բանւորը։ Նա պէտքէ լինի ոչ թէ բանւոր-վարձկան այլ բանւոր-տէր։ Ամեն մի բանւոր մարդ, ով էլ որ լինի նա գիւղացի, գործարանական բանւոր, թէ արհեստաւոր, պէտք է լինի ժողովրդական բոլոր հարստութիւնների սեփականակից—թէ ամբողջ հողի, թէ բոլոր գործարանների և թէ ամեն ինչի։ Նա ոչ միայն այդ բոլորի տէրը պէտք է լինի, այլ և պէտք է շահուի դրանցից և աշխատի։ Աշխատել թէ իր. և թէ բոլորի համար։ Աշխատել, որպէսզի ապրի և իրեն համարի պետական, ժողովրդական բոլոր հարստութիւնների սեփականակից։

Ամեն մի աշխատող մարդ իրաւունք պէտք է ունենայ ասելու՝ «այն բոլորը, ինչ որ պատկանում է ամբողջ պետութեան, պատկանում է ինձ, որովհետև ես աշխատում եմ։ Իսկ ինչ պատկանում է ինձ, պատկանում է և ամբողջ պետութեան, ամբողջ ժողովրդին, որովհետև ժողովուրդը նոյնպիսի աշխատաւոր է, ինչպէս և ես։ Ես աշխատում եմ բոլորի համար, որովհետև բոլորը աշխատում են ինձ համար։ Եթէ ես չ՝աշխատեմ, եթէ ուրիշները ինձ համար աշխատեն—ես ծրիակեր կլինեմ։ Վարձկան բանւորներ բոլորովին չպէտք է լինեն»։ Ո՛չ, այն ամենը ինչ որ հարկաւոր է մարդուն իր աշխատանքը գործադրելու համար, պէտք է դառնայ հասարակական սեփականութիւն։ Այդպիսի կարգերում, մարդու աշխատանքի ամբողջ եկամուտը ոչ թէ կ՝մտնի ուրիշի դրպանը, այլ կմնայ իր դրպանում, իբրև պատրաստի ապրանք։ Բոլոր պատրաստած ապրանքները կ՝բաժանուի բոլոր աշխատաւորների մէջ արդարութեամբ և ճշմարտութեամբ, նայած թէ նրանցից

ամեն մէկը ի՞նչքան և ի՞նչպէս է աշխատել, իսկ մի տեսակ բանւորների ապրանքները կ՝փոխեն ուրիշ բանւորների ապրանքների հետ, աչքի առաջ ունենալով այդ ապրանքները պատրաստելու վրայ դործ դրած ժամանակի և աշխատանքի քանակը։ Այդպիսի կարգերի շնորհիւ ամբողջ պետական կեանքը պէտք է բոլորովին փոխուի։ Այդպիսի կարգերում ամեն ինչ կլինի հասարակական՝ սեփականութիւնն էլ, օգտուելն էլ, արտադրութիւնն էլ։ Այլ ևս չեն լինի ոչ տէրեր, ոչ բանւորներ, որովհետև բոլորն էլ կլինեն թէ տէր և թէ բանւոր։ Չի լինի ոչ աշխատավարձ, ոչ շահ որովհետև թէ աշխատավարձը թէ շահը կ՝մտնի բանւորի դրպանը։ Իսկ ներկայ անարդար կարգերում բանւորի դրպանը մտնում է միայն կոպէկանոց աշխատավարձ, իսկ ամբողջ շահը—ձրիակերի, շահագործող—տիրոջ դրպանը։

Հասարակական դասակարգերի կռիւը և ապագայ հասարակական կարգերը։

Ինչպէս յայտնի է, այժմ բանւորները կռիւ են մղում իրանց տէրերի դէմ, որովհետև նրանց շահերը տարբեր են։ Բոլոր բանւորները—դա մի հասարակական դասակարգ են կազմում. բոլոր տէրերը—միւս հասարակական դասակարգը։ Դասակարգ—նշանակում է այնպիսի մարդկանց խմբակցութիւն որոնց շահերը մէկ են, որովհետև միևնոյն դասակարգի բոլոր մարդիկ իրենց գոյութեան միջոցները ստանում են միևնոյն ճանապարհով։ Օրինակ, բանւորները ապրում են իրենց աշխատավարձով, իսկ գործարանատէրերը—շահով։ Առհասարակ ինչ որ լաւ է գործարանատիրոջ համար, վատ է բանւորի համար, կնշանակէ ներկայ կարգերում գործարանատէրերի շա-

հերը հակասում են բանուորի շահերին։ Այդ պատճառով գործարանատէրերի դասակարգի և բանուորական դասակարգի մէջ միշտ տեղի ունի անընդհատ, կամ ծածուկ կամ բաց, կռիւ։ Այժմ ամեն մի դասակարգ ձգտում է խլել միւս դասակարգից այն ամենը, ինչ որ կարող է։ Դրա մէջն է կայանում դասակարգերի կռիւը, կամ դասակարգային կռիւը։ Իսկ երբ ամբողջ հողը, բոլոր գործարանները, գաւօդները և այլն կդառնան ամբողջ աշխատաւոր ժողովրդի հասարակական սեփականութիւն, այն ժամանակ, պարզ է, որ չեն լինի և դասակարգեր։ Չի լինի և դասակարգային կռիւը։

Կնշանակէ բոլոր մարդիկ կապրեն իրար հետ համերաշխ ու համաձայն, որովհետև իրենց մէջ բաժանելու բան չեն ունենայ։ Բանուորը չի գնայ կոպէկանոց աշխատավարձով աշխատելու, որպէսզի խլի ուրիշի աշխատանքը. մի գործարան այլ ևս չի մրցի ուրիշ գործարանի հետ և չի գցի նրա ապրանքների գինը։ Երբ որ տէրեր չեն լինի, այն ժամանակ տէրերի մրցութիւնն էլ չի լինի։ Այն ժամանակ խօսք էլ չի լինի գնի մասին, որի համար այժմ առևտուր են անում, այլ միայն ապրանքների օգտակարութեան մասին։ Հասարակական գործարանները այնքան ապրանք կպատրաստեն, որքան հարկաւոր է ժողովրդի համար։ Իսկ թէ ինչքան է հարկաւոր ժողովրդին այդ բանը կարողանում են իմանալ մինչև անգնամ այժմ։ Այդպէս էլ կլինի այն ժամանակ։ Չեն լինի և աշխատաղուրկներ։ Երբ ամեն մի բանուոր միևնոյն ժամանակ տէր կլինի, կնշանակէ նա իրաւունք ունի ստանալու աշխատանք. մի գործարանում չլինի, միւսում կստանայ։ Կնշանակէ երբէք չի լինի և անաշխատութիւն։ Ինքը հասարակութիւնը աշխատաղուրկների համար կգտնի աշխատանք, կշինի նոր գործարաններ և առհասարակ կգտնի որևէ հարկաւոր և օգտակար գործ։ Իսկ եթէ այլ ևս

ապրանքներ հարկաւոր չլինի, որովհետև շատ են պատրաստել—դրա մէջ էլ վատ ոչինչ չկայ. նոր բանուորների գալով կարելի կլինի աւելի թեթևացնել միւսների աշխատանքը։ Դրանից էլ ոչ մի վնաս չի գայ պետութեան, որովհետև ապրանքների հարկաւոր քանակը չի պակասի, բոլորին կբաւականանայ։

Կնշանակէ այդպիսի կարգերում նոր բանուորների աւելանալով, ոչ ոք աշխատանքից չի զրկւի. դրա փոխարէն բոլորի համար կարելի կլինի կրճատել բանուորական օրը։ Իսկ երբ բանուորական օրը կարճ լինի այն ժամանակ բանուոր մարդը բաւականին ազատ ժամանակ կունենայ պարապելու իր կրթութեամբ և իր ընտանիքի հոգսերով։ Այժմ գործարանատիրոջը ձեռնտու է որ բանուորները որքան կարելի է երկար աշխատեն և որքան կարելի է քիչ ստանան, իսկ պետութեան համար հարկաւոր է որ բանուոր մարդիկ լինեն առողջ, ամուր կազմուածքով, բարի, ապահով և կրթուած։ Մարդը նախ և առաջ պէտք է մարդ լինի և ոչ թէ լծկան ձի կամ ճորտ։ Ամեն մէկ մարդու համար ամենից աւելի թանդ պէտք է լինի նրա մարդկային երջանկութիւնը, իսկ երջանկութիւնը միայն կուշտ լինելումը չի կայանում։ Որպէսզի մարդ երջանիկ լինի, նրա մէջ չպէտք է մեռնի և հանդչի ոչ մի մարդկային ընդունակութիւն, հոգու և մարմնի և ոչ մի կարողութիւն։ Մի խօսքով, միայն նա է իսկապէս երջանիկ մարդ, որ ապրում է լիակատար, լայն և խորը կեանքով, և որի մէջ չի քնած օ՛չ խելքը, օ՛չ զգացմունքը, օ՛չ կամքը և որը զգում և հասկանում է, որ բոլոր մարդիկ պէտք է եղբայրներ լինեն և որ ամեն մի առանձին մարդ միայն այն ժամանակ կարող է իսկապէս երջանիկ լինել, երբ երջանիկ են նրան շրջապատող բոլոր մարդ-եղբայրները, ամբողջ աշխատաւոր ժողովուրդը։ Իսկ այդպիսի երջանկութիւնը հնա-

բաւոր կդառնայ միայն այն ժամանակ, երբ թէ հողը, թէ գործարանները, թէ զաւօդները կդառնան հասարակական սեփականութիւն, և երբ երկրիս վրայ ոչ մի շահագործումն չի լինի։

Ի՞նչ է սոցիալիզմ։

Կան մարդիկ, որոնք ասում են թէ «այժմս էլ կայ այնպիսի սեփականութիւն, որը չի կարելի անուանել մասնաւոր սեփականութիւն. օրինակ շատ երկաթուղիներ և մի քանի զաւօդներ պատկանում են կաղնայինը — միևնոյնն է թէ պետութեան. պետական երկաթուղիները պատկանում են ամբողջ պետութեան, այսինքն պետութեան բոլոր քաղաքացիներին»։ Այդպէս ասում են և մտածում շատ ու շատ մարդիկ, որոնք շատ քիչ բան են հասկանում։ Բայց դա սխալ է։ Զէ՞ որ ներկայ պետական իշխանութիւնը, այսինքն ներկայ կառավարութիւնը, կաղնան—բոլորովին էլ ժողովրդական կառավարութիւն չէ։ Այդ կառավարութիւնը դեռ ևս գտնւում է ոչ թէ ժողովրդի ձեռքում, այլ ժողովրդի շահագործողների ձեռքում։ Կնշանակէ երկաթուղիների և այլ պետական ձեռնարկութիւնների տէրերն էլ նրանք են, նրանք են կառավարում ամբողջ գործը կաղնայի օգտին, իսկ կաղնան նրանց ձեռքում, միևնոյն շահագործողն է, ինչպէս օրինակ մի որևէ մեծ առևտրական ձեռնարկութիւն։ Ներկայ պետութեան այդպիսի անարդար կարգերում այդ պետական առևտրականներից ոչ մէկն էլ չի մտածում աշխատաւոր ժողովրդի շահերի մասին։ Նրանք միայն աշխատում են որքան կարելի է շատ փող մտնի կաղնան, այն յոյսով ի հարկէ, որ իրենք էլ բաժին ստանան։

Կնշանակէ պետական արդիւնաբերական ձեռնարկութիւնները երբէք չի կարելի համարել համաժողովրդական, հասարակական ձեռնարկութիւններ։ Կաղնան միայն նրանով է տարբերւում միւս ձեռնարկողներից, որ նա ամենից հարուստն է։ Կնշանակէ պետական ներկայ կարգերում պետական սեփականութիւնը, հասարակական սեփականութիւն չէ։ Որպէսզի նա կարողանայ դառնալ համաժողովրդական, անբաժան սեփականութիւն, դրա համար անհրաժեշտ է որ պետական իշխանութիւնը ամբողջովին անցնի աշխատաւոր ժողովրդի ձեռքը։ Այն կարգերը, որտեղ թէ հողը, թէ գործարանները, թէ զաւօդները, թէ հանքերը, թէ շոգենաւերը, թէ երկաթուղիները, թէ արհեստանոցները, և թէ մեքենաները կլինեն հասարակական, համաժողովրդական, անբաժան սեփականութիւն, իսկ նրանցից կօգտուեն և նրանց վրայ կաշխատեն բոլոր մարդիկ միասին, այդպիսի կարգերը կոչւում են սոցիալիստական կարգեր կամ հասարակութեան սոցիալիստական կազմակերպութիւն։ Այն մարդիկ, որոնք ձգտում են այդպիսի կարգերի կոչւում են սոցիալիստներ։ Այդպիսի հասարակական կարգերի օգտակարութեան և անհրաժեշտութեան մասին ունեցած նրանց գիտութիւնը և հաւատքը կոչւում է սոցիալիզմ։

Սոցիալիստական կարգերը անհրաժեշտ և ձեռնտու են նախ և առաջ ամբողջ աշխատաւոր դասակարգին—գիւղացիներին և գործարանական բանւորներին։ Այդ պատճառով աշխարհիս բոլոր երկրներում, աշխատաւոր ժողովրդի միջից դուրս են գալի աւելի ու աւելի մեծ քանակութեամբ սոցիալիստներ։ Մի քանի երկրներում ինչպէս օրինակ Գերմանիայում նրանց թիւը հասնում է միլլիոնների և մինչև անգամ տասնեակ միլլիոնների։ Ներկայումս Ռուսաստանում էլ բաւականին սոցիալիստներ կան։ Նրանք բոլորն էլ համա-

ձայն են իրար հետ մի բանում, որ վերջ ի վերջոյ հողը, գործարանները, գաւօդները և այլն դրանք բոլորն էլ պէտք է հասարակական սեփականութիւն դառնան: Նրանք բոլորն էլ պաշտպանում են աշխատաւոր ժողովրդի շահերը, բոլորն էլ հասկանում են որ ամեն մի բանւոր մարդ ամենից աւելի մօտ է միւս բանւոր մարդուն, ինչ ցեղին կամ ազգին էլ պատկանելիս չլինի նա: Ռուս բանւորի համար ի՞նչքան աւելի մօտ է գերմանացի բանւորը, քան նրա ռուս խաղէյինը: Ճիշտ այդպէս էլ ամեն մի կապիտալիստին աւելի մօտ է կապիտալիստը, քան բանւորները, որովհետև բոլոր կապիտալիստներին կապում, միացնում է նրանց, կապիտալիստների, շահերը, բոլոր բանւորներին - բանւորական շահերը: Շահերի նոյնութիւնը միացնում է բոլոր երկրների, բոլոր ազգութիւնների, ցեղերի և կրօնների բանւորներին: Կնշանակէ բանւորական գործը — միջազգային գործ է, և ոչ թէ միայն ազգային: Այդ պատճառով էլ սոցիալիստները խարութիւն չեն դնում ո՛չ ազգութիւնների, ո՛չ ցեղերի և ոչ էլ կրօնների, այլ աշխատում են միացնել բոլոր երկրների բանւորներին: Մի երկրի սոցիալիստները օգնում են միւս երկրների սոցիալիստներին. ընդհանուր ժողովներ են ունենում, աշխատում են գործել համերաշխ և միացեալ կերպով և միշտ ու ամեն տեղ պաշտպանում են աշխատաւոր ժողովրդի շահերը շահագործողների դէմ:

Ճիշտ է բոլոր սոցիալիստները միմիանց հետ համաձայն չեն: Այնուամենայնիւ նրանց մէջ աւելի շատ նմանութիւն կայ քան տարբերութիւն: Զանազան երկրների սոցիալիստները, իրենց հայեացքների համաձայն, բաժանւում են կուսակցութիւնների: Ռուսական սոցիալիստներն էլ բաժանւում են երկու մեծ կուսակցութիւնների: Կուսակցութիւն—նշանակում է մի այնպիսի միութիւն, որի մէջ մտնում են այն բոլոր

մարդիկ, որոնք միատեսակ են մտածում, ձգտում են միևնոյն նպատակների և հասարակական ու պետական միևնոյն փոփոխութիւնների: Ռուսական սոցիալիստների մէկ կուսակցութիւնը կոչւում է «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիկական բանւորական կուսակցութիւն» իսկ այդ կուսակցութեան անդամները կոչւում են «սոցիալ-դեմոկրատներ»: Ռուսական միւս սոցիալիստական կուսակցութիւնը կոչւում է «սոցիալիստ-յեղափոխականների կուսակցութիւն»: Սոցիալ-դեմոկրատները իրենց անուանում են պրոլէտարական կուսակցութիւն և պաշտպանում են նախ և առաջ վարձու բանւորների շահերը, իսկ գիւղացիներին նրանք համարում են բուրժուազիա (թէև մանր) և կարծում են, որ բանւորների և գիւղացիների շահերը ոչ թէ միևնոյն են այլ իրար հակառակ: Սոցիալիստ-յեղափոխականները իրենց անուանում են ամբողջ աշխատաւոր և շահագործւող ժողովրդի (թէ բանւորների և թէ գիւղացիների) կուսակցութիւն և կարծում են, որ թէ մէկի և թէ միւսների շահերը ըստ էութեան նոյնն են: Երկու կուսակցութիւններն էլ, այսինքն թէ սոցիալ-դեմոկրատները և թէ սոցիալիստ-յեղափոխականները ձգտում են սոցիալիստական կարգերին:

Դեմոկրատիա և ժողովրդապետութիւն:

Բայց ի՞նչ միջոցներով կարելի է հասնել այդ կարգերին: Արդէն ասացինք, որ տիրող ներկայ կարգերում, պետական իշխանութիւնը գտնւում է շահագործողների (բուրժուազիայի) ձեռքում: Հասկանալի է, որ քանի դեռ այդ իշխանութիւնը գտնւում է նրանց ձեռքում, ոչ մի սոցիալիստական կարգեր չեն կարող իրականանալ: Թէ՛ օրէնքները, թէ՛ դատարան-

ները, թէ՛ զօրքը, թէ՛ ոստիկանութիւնը, թէ՛ դպրոցները, թէ՛ եկեղեցին—այդ բոլորը ծառայում են շահագործողներին, իսկ ժողովրդին ընկնում է միայն փշրունքները: Ժողովրդին տալիս են միայն, ինչ չի կարելի չտալ: Պարզ է, որ եթէ աշխատաւոր ժողովուրդը ուզում է ձեռք բերել մարդավայել կեանք, նա նախ և առաջ պէտք է շահագործողների ձեռքից խլի պետական իշխանութիւնը և պահի իր ձեռքում: Դա նրա ամենակարևոր և ամենաառաջին գործը պէտք է լինի: Դրանից էլ հարկաւոր է սկսել: Ներկայումս օրէնքները մշակում են չինովնիկները, իսկ չինովնիկները պետական իշխանութեան, այսինքն միևնոյն շահագործողների կաշառակեր վարձկաններն են: Նրանք օրէնքներ են հնարում առանց հարցնելու, իմանալու և ստանալու աշխատաւոր ժողովրդի համաձայնութիւնը: Հարկաւոր է, որ ժողովուրդը, ինքը իրեն համար օրէնքներ մշակի և հաստատի, առանց չինովնիկների, մինիստրների և թագաւորի համաձայնութեան: Աշխատաւոր ժողովրդի շահերը պահանջում են, որ օրէնսդրական իշխանութիւնը գտնւի ոչ թէ ազնուական—կալուածատէրերի, գաւօդչիկների, վաճառականների, կապիտալիստների և ուրիշ շահագործողների ձեռքում, այլ իր սեփական ձեռքում: Իսկ դրա համար հարկաւոր է, որ ամբողջ պետութեան գլուխ կանգնած լինեն ամբողջ աշխատաւոր ժողովրդից ընտրուած մարդիկ: Անհրաժեշտ է, որ այդ մարդկանց ընտրէ ամբողջ ժողովուրդը, առանց կոչման, կարողութեան, ազգի և սեռի խտրութեան: Հարկաւոր է, որ նրանց ընտրեն ոչ թէ միայն հարուստները, այլ և ամենաաղքատները, թէ՛ ռուսները, թէ՛ լեհացիք, թէ՛ հրէաները, թէ՛ հայերը, թէ՛ ազամարդիկ և թէ կանայք: Չէ՞ որ բոլոր մարդիկն էլ իրենց պետութեան քաղաքացիներն են: Չէ՞ որ հասարակական գործերը բոլորի սրտին էլ մօտ են: Այդ պատճառով, բոլոր քաղաքացիները պէտք է իրաւունք ունենան ընտրելու, և ընտրելու այն մարդուն, որին իրենց խղճի համաձայն ուզում են, առանց կողմնակի ճնշումների: Դա է, որ կոչւում է ընդհանուր ընտրողական իրաւունք:

Բայց միայն ընդհանուր ընտրողական իրաւունքը դեռ բաւական չէ—հարկաւոր է, որ նա լինի բոլորի համար հաւասար: Դա նշանակում է, որ ամեն մի քաղաքացի, ով էլ որ լինի նա, պէտք է ունենայ միայն մի ձայն որպէսզի հարուստը իր ձեռքում չունենայ երկու երեք ձայն միայն նրա համար, որ նա հարուստ է, և որպէսզի ամեն ընտրող իրաւունք ունենայ նաև ընտրելու: Աշխատաւոր ժողովրդի շահերի տեսակէտից հարկաւոր է նոյնպէս, որ ընդհանուր հաւասար ընտրողական իրաւունքը լինի նաև ուղղակի: Դա նշանակում է իրաւունք ունենալ իրեն ցանկացած մարդուն ընտրել առանց որևէ միջնորդութեան, ուղղակի կերպով: Ցաճախ լինում է այսպէս՝ քաղաքացիները ընտրում են պաւիրակներ, իսկ այդ պաւիրակները իրենց միջից ընտրում են իսկական պատգամաւորներին: Այդպիսի ընտրութիւնները կոչւում են երկաստիճան, որովհետև անցնում են երկու աստիճան: Ամեն մի աստիճանի վրայ ընտրեալ մարդիկ աւելի ու աւելի մաղւում են, կարծես թէ անցնում են մաղի միջով: Հասկանալի է, որ այդպիսի պայմաններում կարող են չընտրուել այն մարդիկ, որոնց կուզենար ընտրել աշխատաւոր ժողովուրդը, այլ ընտրւում են նրանք, որոնց մինչև այդ ժողովուրդը բոլորովին չէր էլ ճանաչում:

Կնշանակէ երկաստիճան ընտրութիւնները ձեռնտու են միայն ժողովրդի շահագործողներին և ոչ թէ աշխատաւոր ժողովրդին: Այդ պատճառով էլ մինիստր Բուլիգինը գիւղացիների համար մտցրեց մինչև անգամ քառաստիճան ընտրութիւններ Պետական Դումայի ընտրութիւնների մէջ, որպէսզի

այդպիսով այնտեղ մտնեն միայն կառավարութեան համար ցանկալի գիւղացիները։ Ընտրութիւնների մէջ ոչ մի ասա-ճաններ չպէտք է լինեն։ Ժողովուրդը պէտք է իրաւունք ունենայ ընտրելու այն մարդկանց, որոնց ինքն է ուզում, ուղղակի կերպով, առանց միջնորդների։ Վերջապէս, որպէսզի ընտրութիւնները կատարուեն առանց որևէ ճնշումների, անհրաժեշտ է գաղտնի, այսինքն փակ քուէարկութիւն։ Դա նշանակում է, որ ամեն մի քաղաքացի պէտք է տոմսակի վրայ գրի այն մարդու ազգը, որին ուզում է ինքը ընտրել, և ոչ ոք գործ չպէտք է ունենայ թէ ինչ մարդ ո՞ւմ անունն է գրել, և դա ոչ ոք չպէտք է գիտենայ։ Զէ՞ որ դեռ աշխարհիս վրայ կան հարուստներ ու աղքատներ, ուժեղներ և թոյլեր։ Հասկանալի է, որ հարուստները և ուժեղները ամեն կերպ կաշխատեն, որ աղքատները և թոյլերը իրենց ձայն տան։ Հասկանալի է, որ հարուստ և ուժեղ մարդը միշտ կարող է հալածել աղքատին և թոյլին, եթէ դրանք իրեն չեն ձայն տալ։ Ահա, որպէսզի կարելի լինի աղքատին և թոյլին ազատել այդպիսի հալածանքներից, դրա համար հնարուած է գաղտնի քուէարկութիւնը, որի շնորհիւ հարուստները և ուժեղները չեն կարող իմանալ թէ ո՞ւմ են ձայն տալ աղքատները։ Ահա թէ ինչպիսի ընտրողական իրաւունք է անհրաժեշտ աշխատաւոր ժողովրդին. առաջին՝ ընդհանուր, երկրորդ՝ հաւասար, երրորդ՝ ուղղակի և չորրորդ՝ գաղտնի։ Բայց հէնց այդպիսի ընտրողական իրաւունքը ծառնաու չէ ժողովրդի շահագործողներին։ Դրա համար էլ այդպիսի ընտրողական իրաւունք են պահանջում միայն ժողովրդի իսկական, անկեղծ բարեկամները։ Միայն այդպիսի ընտրողական իրաւունք մտցնելով, իսկապէս, ժողովրդի ընտրեալները, կլինեն ժողովրդի ներկայացուցիչներ, իսկ պետական իշխանութիւնը իսկապէս կանցնի ժողովրդական ներկայացուցիչ-

ների ձեռքը։ Միայն այդպիսի ընտրողական իրաւունք մտցնելով աշխատաւոր ժողովուրդը կարող կլինի ընտրել այնպիսի մարդկանց, որոնց նա միանգամայն հաւատում է և ճանաչում է նրանց իբրև խելօք, աղնիւ, գիտակից, աշխատաւոր, համարձակ և ժողովրդի շահերը հասկացող։ Ահա իր այդպիսի ներկայացուցիչներին պէտք է դնի պետութեան գլուխ աշխատաւոր ժողովուրդը։

Երբ կմտցնուի ընդհանուր ընտրողական իրաւունք, թող հարուստներն էլ ընտրեն իրենց ներկայացուցիչներին — դա ժողովրդի համար այնքան էլ վտանգաւոր չէ, որովհետև շահագործողների թիւը քիչ է, իսկ աշխատաւոր ժողովրդի թիւը շատ. կնշանակէ նրանց ներկայացուցիչների թիւը աւելի քիչ կլինի, քան աշխատաւոր ժողովրդի ներկայացուցիչների թիւը, որովհետև վերջինները աւելի շատ ընտրողական ձայներ ունեն, քան ժողովրդի շահագործողները։ Աշխատաւոր ժողովրդի այդպիսի ներկայացուցիչները կփոխեն այն բոլոր օրէնքները, որոնք այժմ վնասակար են գիւղացիների, գործարանական և այլ բանուորների համար։ Աշխատաւոր ժողովրդի իսկական ներկայացուցիչները բոլոր չինովնիկներից էլ լաւ կդիտենան և իսկապէս էլ գիտեն, թէ ո՞րն է ժողովրդի համար օգտաւէտ և ո՞րը վնասակար։

Բայց դեռ բաւական չէ հնարել և քննել օրէնքները։ Գլխաւորը այդ օրէնքները հաստատելումն է։ Մի քանի երկրներում լինում է այսպէս՝ ժողովրդի ընտրեալները քննում են օրէնքները, իսկ թագաւորը հաստատում է։ Իսկ թագաւորի կռնակում նստած են թագաւորի ազգականները, պալատականները, իսկ նրանց կողքին — նշանաւոր չինովնիկները, իշխաններն ու կոմսերը, աղնւականները, հարուստ-կապիտալիստները, գործարանատէրերը և նշանաւոր վաճառականները։ Շատ անգամ դժուար է լինում որոշել թէ ո՞րտեղ է վերջանում

թագաւորի կամքը, և որտեղից է սկսւում զանազան ժողովրդական շահագործողների խարդախութիւնները և շահատակութիւնները: Հասկանալի է, որ մինչև անգամ ամենախելօք, ընդունակ և աշխատաւոր թագաւորը չի կարող ամեն ինչ դիտենալ և հասկանալ թէ ի՞նչպէս են վարւում 140 միլլիոն ժողովրդի հետ: Չի կարող եթէ մինչև անգամ ուզենայ: Այդ պատճառով նա պէտք է խորհուրդներ հարցնի նրանցից, որոնք նրա կողքին են կանգնած: Ինչ որ նրա մտերիմ մարդիկն են ասում, նա էլ նոյնն է կրկնում: Բացի դրանից, ինքը թագաւորն էլ նոյնպէս ազնուական է, նոյնպէս կալուածատէր է, նոյնպէս հարուստ է: Նա ինքը ահագին կալուածներ, գործարաններ, դաւօղներ և հսկայական կապիտալներ ունի արտասահմանում: Թագաւորն էլ նոյնպիսի մարդ է, ինչպէս ուրիշները: Նրա համար էլ, ինչպէս և ուրիշների համար, իր շապիկը աւելի մօտ է մարմնին: Քանի որ դա այդպէս է, ուրեմն ի՞նչ կարող է սպասել նրանից աշխատաւոր ժողովուրդը:

Կարող է պատահել, որ թագաւորի և ժողովրդի ներկայացուցիչների մէջ տարաձայնութիւններ, վէճեր ծագեն. օրինակ, ժողովրդական ներկայացուցիչներին այս ինչ օրէնքը կարող է լաւ թւալ իսկ թագաւորին և նրա բարեկամներին վատ: Հասկանալի է, որ թագաւորը այդպիսի օրէնքը չի հաստատի: Օրինակը մեր աչքի առաջն է: Հէնց որ Պետական Դուման ուզեց հրատարակել նոր օրէնք, որով բոլոր հողերը պէտք է անցնեն աշխատաւոր ժողովրդի ձեռքը, թագաւորը անմիջապէս ցրեց Դուման: Ճիշտ այդպէս թագաւորը կարող է չհաստատել այն բոլոր օրէնքները, որոնք արդէն հաւանութիւն են գտել ժողովրդի կողմից, բայց որոնք նրա ճաշակին չեն համապատասխանում: Կնշանակէ ժողովրդի կամքը ամենից բարձր պէտք է լինի: Կնշանակէ օրէնքներ հաստատողը պէտք է լինի ինքը աշխատաւոր ժողովուրդը, յանձին իր ներկայացուցիչների: Ինչ որ հաստատեն ժողովրդի ներկայացուցիչները, նա էլ պէտք է օրէնք լինի: Միայն այդպիսի կարգերում, պետական իշխանութեան գլուխ իսկապէս կանգնած կլինեն ժողովրդական ներկայացուցիչները, ժողովրդի ընտրեալները: Ժողովրդի կամքը, ժողովրդի երջանկութիւնը ամենից բարձր պէտք է լինի կանգնած: Կնշանակէ օրէնսդրական իշխանութիւնը ամբողջովին պէտք է ժողովրդի ձեռքումը լինի: Եւ ոչ թէ միայն օրէնսդրականը, այլ և գործադիր ու դատաստանական իշխանութիւնը: Ժողովուրդը ինքը պէտք է կազմի օրէնքներ, հաստատի, հսկի նրանց իրագործման վրայ և պատասխանատուութեան ենթարկի այդ օրէնքը խախտողներին: Առանց դրանց անհնար է կանոնաւոր և արդարացի պետական կազմը: Աշխատաւոր ժողովուրդը միայն այն օրէնքներին պէտք է հպատակի, որոնք ինքն է դրել և ինքն է հաստատել: Իսկ երբ այդպիսով օրէնսդրական իշխանութիւնը կանցնի ժողովրդի ձեռքն, այն ժամանակ դատարանն էլ, ոստիկանութիւնն էլ, զօրքն էլ և ամբողջ պետական իշխանութիւնն էլ կանցնի նրա ձեռքը: Ինչպիսի օրէնքներ որ կհրատարակի ժողովուրդը, այդ օրէնքներին էլ կհպատակուեն նրանք:

Կնշանակէ ժողովուրդը իր երջանկութեան համար նախ և առաջ պէտք է ձգտի իր ձեռքն առնել օրէնսդրական իշխանութիւնը: Պետութեան այդպիսի կարգերում, ոչ թէ ժողովուրդը կլինի կառավարութեան ծառան, այլ կառավարութիւնը ժողովրդի ծառան:

Դեմոկրատիկ հանրապետություն։

Երբ կիրականան պետական այդպիսի կարգերը, այն ժամանակ ամեն ինչ պետության մեջ կկատարվի միայն և միայն ժողովրդի իշխանությամբ։ Այդպիսի պետության գլուխ կանգնած կլինի ժողովրդական ներկայացուցիչների խորհուրդը։ Այդպես են կազմված այժմ շատ և շատ պետություններ։ Օրինակ, Ամերիկայում բոլոր պետությունները, ինչքան որ կան այնտեղ, առանց թագավորի են և իրենք են կառավարվում. նույնն է Ֆրանսիայում և Զուիցերիայում։ Այնտեղ, ընտրված խորհրդի ձեռքումն է գտնվում ամբողջ իշխանությունը, թէ՛ օրէնսդրական, թէ՛ գործադիր, թէ՛ դատաստանական, թէ՛ զօրքը, թէ՛ օտար պետությունների հետ ունեցած յարաբերությունները, թէ՛ պատերազմ յայտարարելու և թէ դաշն կապելու իրաւունքը։ Քանի որ այդտեղ ամբողջ իշխանությունը գտնվում է ժողովրդի և նրա ներկայացուցիչների ձեռքում, նշանակում է, որ թագավորի ձեռքում այլ ևս ոչ մի իշխանություն չկայ։ Այդ պատճառով այդ երկրներում բոլորովին թագավոր էլ չկայ։ Հասկանալի է, որ այդ բոլոր երկրներում էլ կայ պետության գլուխ, բայց նա ընտրովի է, և ոչ թէ ժառանգական։ Նա ընտրվում է ոչ թէ մինչև մահ, այլ կարճ ժամանակով, օրինակ 4 կամ 5 տարով։ Այդպես են վարվում նրա համար, որպէսզի եթէ նա վատ դուրս գայ, ժողովուրդը կարողանայ առանց դժվարության, օրինական ճանապարհով փոխել. ուզղակի նրան այլ ևս նորից չընտրել։ Պետական այդպիսի կազմը, երբ պետական իշխանությունը ամբողջովին գտնվում է ժողովրդի ձեռքին, կոչվում է հանրապետություն։ Հանրապետական կարգերում պետական ամբողջ իշխանությունը ամենաստորինից մինչև ամենաբարձրը, իսկապես գտնվում է

ամբողջ ժողովրդի ձեռքում և պետության մեջ ժողովրդից դուրս ուրիշ տէր չկայ։ Միայն այդպիսի կարգերում ոչ ոք չի կարող խանգարել աշխատավոր ժողովրդին իր բաղդը տնօրինել այնպէս, ինչպէս ինքն է հասկանում և ուզում։

Մի՞ւս պետություններում կան ժառանգական թագավորներ։ Մի քանի երկրներում, օրինակ Անգլիայում, նրանք առանց ժողովրդի համաձայնության իրաւունք չունեն ոչինչ անելու։ Այդպիսի թագավորները միայն անունով են թագավոր։ Նրանք միայն ռոճիկ են ստանում և իրենք իրենց շոյում են այդ անունով։ Նրանք ոչ այնքան վնասակար են, որքան աւելորդ։ Նրանք իրենք իրենց մասին ասում են՝ «մենք թագավորում ենք, բայց ոչ թէ կառավարում»։ Նրանց այդ խօսքերին աշխատավոր ժողովուրդը պէտք է պատասխանի՝ «իմ հայրենի երկրում ես ինքս պէտք է թէ թագավորեմ, թէ կառավարեմ. այդ փողերը ինձ են հարկավոր, կարիք չունեմ ձեզ վրայ ծախսելու։ Բոլոր պետական գործերը ես ինքս էլ լաւ կարող եմ վարել»։

Երբ ամբողջ պետական իշխանությունը ժողովրդի ձեռքում լինի, այն ժամանակ իսկապէս ժողովուրդը ինքը կվարի բոլոր գործերը և, պարզ է, որ կվերացնի ամբողջ ռուսական պետությունը իր կարիքների համաձայն։ Այն ժամանակ նա իր վզից կթօթափի բոլոր շահագործողներին և կանձահարի բոլոր սեփականատէրերին։ Ժողովրդին հարկավոր է ձեռք բերել պետական իշխանությունը, որպէսզի օրէնքների հիման վրայ վերացնի հողի, գործարանների, գաւօդների և այլոց մասնաւոր սեփականությունը։ Երբ գոյություն չի ունենայ մասնաւոր սեփականություն, գոյություն չի ունենայ և ոչ մի շահագործումն։ Կնշանակէ պետական իշխանությունը հարկավոր է ժողովրդին ոչ թէ միայն իշխանության համար, այլ որպէսզի կարողանայ այդպիսով կարգավորել ժո-

զովրդական գործերը։ Պետական և հասարակական արդար կարգեր հաստատելու համար անհրաժեշտ է պետական և հասարակական ներկայ կարգերում մտցնել խոշոր, լայն և արմատական փոփոխութիւններ։ Պարզ է, որ այդ փոփոխութիւնները չի կարելի միանգամից մտցնել։ Դրա համար անհրաժեշտ է երկար ժամանակ, մեծ աշխատանք և կռիւ։ Բայց կան փոփոխութիւններ, որոնք կարելի է մտցնել այժմ և իսկ, առանց յետաձգելու։ Սոցիալիստ-յեղափոխականների կուսակցութիւնը հնարաւոր և անյետաձգելի է համարում հետևեալ փոփոխութիւնները։

ԳԼՈՒԽ Գ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ

Ժողովրդական ներկայացուցչութիւն։

Ռուսական պետութեան գլուխ պէտք է կանգնած լինի ոչ թէ ինքնակալ թագաւորը, այլ Պետական Դուման։

Օրէնքներ հրատարակելու և հաստատելու իրաւունքը պէտք է պատկանի միայն Պետական Դումային։ Միայն նա պէտք է իրաւունք ունենայ հարկեր ու տուրքեր նշանակել, քննել և հաստատել պետական ելևմտից հաշիւը, որտեղ ասւում է թէ այս ինչ տարին որքան փող պէտք է հաւաքւի ժողովրդից և ի՞նչի վրայ պէտք է ծախսւի։ Առանց Պետական Դումայի համաձայնութեան ոչ մի հարկ, ոչ մի մաքս չպէտք է հաւաքւի, ոչ մի պետական փոխառութիւն չպէտք է կատարւի։ Նոյնպէս առանց նրա համաձայնութեան ոչ մի

պատերազմ չպէտք է յայտարարւի և ոչ մի հաշտութիւն չպէտք է կապւի։

Այդ Դուման պէտք է կազմւի ամբողջ ժողովրդից, բոլոր շրջաններից և նահանգներից ընտրած ներկայացուցիչներից։ Այդ ներկայացուցիչները պէտք է ընտրւեն ամբողջ ժողովրդի կողմից, առանց կոչման և կարողութեան տարբերութեան, առանց սեռի, ազգի և կրօնի խտրութեան, ուղղակի, հաւասար և գաղտնի քւէարկութեամբ։ Ձայնի իրաւունք պէտք է ունենայ Ռուսաստանի ամեն մի քաղաքացի 20 տարեկանից բարձր։ Պետական Դումայում տեղ պէտք է ունենան բոլոր ցեղերի, և բոլոր շրջանների ու նահանգների և բոլոր կուսակցութիւնների ընտրւած ներկայացուցիչները։

Համեմատական ընտրութիւններ։

Միանգամայն անարդարացի կլինէր, եթէ մի որևիցէ կուսակցութիւն Պետական Դումայում չունենար իր ներկայացուցիչները։ Քանի որ պետութեան մէջ կայ մի կուսակցութիւն, կնշանակէ որ ժողովրդի մէջ էլ գոյութիւն ունեն այն կարծիքները և շահերը, որոնց արտայայտիչն է այդ կուսակցութեան ծրագիրը։ Ընդհանուր ձայնատուութեան դէպքում հեշտութեամբ կարող է պատահել, որ մի որևէ կուսակցութեան առաջարկած մարդիկը ամեն տեղ ստանան աւելի քիչ ձայն, քան ուրիշ կուսակցութիւնների առաջարկած մարդիկ. այդ դէպքում ի հարկէ այդ մարդիկ չեն կարողանայ դնալ Դումա։ Դա անարդարութիւն է։ Կնշանակէ հարկաւոր է այնպէս կազմակերպել ընտրութիւնները, որ Պետական Դումայի անդամ կարողանան լինել բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչները և որպէսզի այն կու-

սակցութիւնն աւելի շատ ներկայացուցիչներ ունենայ, որը աւելի ուժեղ, աւելի տարածուած և աւելի բաղմամարդ է։ Այդ պատճառով Դանիայում և Սերբիայում ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ծայնատուութիւնը կազմակերպուած է այսպէս՝ ընդունենք թէ ամեն մի հազար մարդուց պէտք է ընտրել 10 ներկայացուցիչ։ Այդ հազար մարդուց ենթադրենք, օրինակի համար, թէ 500 մարդ՝ պատկանում է մի կուսակցութեան, 300 մարդ՝ երկրորդ կուսակցութեան և 200 մարդ երրորդ կուսակցութեան։ Ամեն մի հարիւր ընտրողին ընկնում է մէկ ներկայացուցիչ։ Կնշանակէ առաջին կուսակցութիւնը պէտք է ուղարկի Դումա 5 ներկայացուցիչ, երկրորդը—3, երրորդը —2։ Դա կոչւում է համեմատական ներկայացուցչութիւն։ Առանց այդ համեմատական ներկայացուցչութեան երրորդ կուսակցութիւնը չէր կարողանայ Դումա ուղարկել և ոչ մի ներկայացուցիչ, որովհետև նրա ծայները կխեղդէին առաջին երկու կուսակցութիւնների ծայներով։ Կնշանակէ համեմատական ներկայացուցչութիւնը անհրաժեշտ է, որպէսզի իրենց հայրենիքի պետական կեանքում կարողանան մասնակցել զանազան շահերի, կարծիքների և ուղղութիւնների մարդիկ։ Միայն այդպիսի կարգերում ժողովրդական ներկայացուցչութիւնը կարող է լինել իսկապէս համաժողովրդական։ Այդ պատճառով դրան էլ պէտք է ծգտի աշխատաւոր ժողովուրդը։

Ռեֆերէնդում.

Առանձին կարևոր դէպքերում Պետական Դուման պէտք է հարցնէ ամբողջ ժողովրդին, թէ ինչ կերպ վճռի այս կամ այն հարցը. Դուման պէտք է հարցնի բոլոր ժողովրդին, թէ

արդեօք ժողովուրդը ուզում է թէ չէ ուզում այս կամ այն օրէնքը։ Դա կոչւում է ռեֆերէնդում։ Ռեֆերէնդումի դէպքում ժողովուրդը թերթիկների միջոցով քուէարկում է այս կամ այն վճիռը։

Օրէնսդրական նախաձեռնութիւն.

Ռեֆերէնդումից դուրս ժողովուրդը պէտք է իրաւունք ունենայ նաև անմիջապէս յայտնել Դումային իր կարիքները և պահանջել նոր օրէնքներ, որոնք կարող են բաւարարութիւն տալ ժողովրդի այս կամ այն կարիքին։ Ուրիշ խօսքով ասած, առանձին շրջանները, նահանգները, կուսակցութիւնները, միութիւնները, մինչև անգամ խմբակները և առանձին անհատները իրաւունք պէտք է ունենան յայտարարութիւն տալ Պետական Դումային նոր օրէնքների անհրաժեշտութեան մասին։ Դա էլ կոչւում է օրէնսդրական նախաձեռնութիւն։ Այդպիսի նախաձեռնութիւնը և ռեֆերէնդումը կոչւում են անմիջական ժողովրդական օրէնսդրութիւն։ Աշխատաւոր ժողովրդի շահերի տեսակէտից անհրաժեշտ է այդպիսի օրէնսդրութիւնը Դումայի ամեն տեսակ սխալների առաջն առնելու համար։

Տեղական ինքնավարութիւն։

Ռուսական պետութեան բոլոր նահանգներում, շրջաններում, գաւառներում և գիւղական հասարակութիւններում իր բոլոր հասարակական գործերը պէտք է վարի ինքը ժողովուրդը և ոչ թէ ոստիկանութիւնը, նահանգապետը կամ

գեներալ-նահանգապետը։ Ամբողջ ժողովուրդը ինքը պէտք է կառավարի իրեն և ոչ թէ վերևից նշանակուած իշխանութիւնը։ Ոչ ոք իրաւունք չ'պէտք է ունենայ որևէ իշխանութիւն նշանակել աշխատաւոր ժողովրդի գլխին առանց նրա գիտութեան, համաձայնութեան և ցանկութեան։ Բոլոր իշխանութիւնները պէտք է լինեն ընտրովի այն էլ ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ձայնատուութեամբ։ Ուրիշ խօսքով ասած, ամբողջ Ռուսաստանում կազեօնի կառավարութեան փոխարէն պէտք է լինի ժողովրդական ինքնավարութիւն։ Բոլոր քաղաքներում պէտք է մտցնել քաղաքային ինքնավարութիւն, իսկ նահանգներում—զեմստվոյին ինքնավարութիւն։ Բայց զեմստվոյին գործերը պէտք է վարեն ամբողջ տեղական ազգաբնակութեան ներկայացուցիչները և ոչ թէ միայն հարուստների, կալուածատէրերի և վաճառականների ներկայացուցիչները։ Քաղաքային դումաները և զեմստվոյին ներկայացուցիչները պէտք է ընտրուեն ժողովրդից ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ձայնատուութեամբ, նոյնպէս և առանց կարողութեան, սեռի, ազգի և կրօնի խտրութեան։ Այդպիսի ինքնավարութիւն պէտք է մտցնել, ոչ թէ միայն նահանգներում և գաւառներում, այլ և գիւղերում։ Աշխատաւոր ժողովրդի ձեռքում պէտք է գտնուեն բոլոր տեղական հասարակական գործերը։ Ոչ մի իշխանութիւն չպէտք է խառնուի ժողովրդի թէ տնտեսական և թէ քաղաքական գործերում։ Տեղական ոստիկանութիւնը պէտք է հպատակի կանոնաւոր կազմակերպուած քաղաքային դումաներին և զեմստվոներին, և միայն նրանց։ Այդպիսի դումաները և զեմստվոները պէտք է իրաւունք ունենան կազմել և հաստատել իրենց տեղի համար առանձին օրէնքներ միայն այն պայմանով, որ այդ տեղական օրէնքները ոչնչդոտ չհանդիսանան և չվնասեն այլ տեղերին և ամբողջ

պետութեան։ Առանձին քաղաքները և զեմստվոները պէտք է իրաւունք ունենան իրար մէջ, քաղաքների և զեմստվոների միութիւններ, հաստատել։

Աւտոնոմիա և ֆեդերացիա։

Ռուսական պետութեան առանձին շրջանները ինչպէս, օրինակ, Լեհաստանը, Կովկասը և միւսները պէտք է ունենան նոյնպիսի ինքնուրոյն պետական կազմ, ինչպիսին ունի այժմ Ֆինլանդիան—ուրիշ խօսքով ասած պէտք է ստանան աւտոնոմիա, եթէ ի հարկէ դա կուզեն այդ երկրների աշխատաւոր ժողովուրդը։ Բոլոր այդպիսի աւտոնոմ, այսինքն, ինքնուրոյն շրջանները, պէտք է կազմեն մի ընդհանուր միութիւն առանց պետական ամբողջութեան և միութեան վնասելու։ Աւտոնոմ շրջանները, որոնք կմտնեն ռուսական պետութեան մէջ պէտք է ուղարկեն իրենց ներկայացուցիչներին համառուսական Պետական Դուման, որպէս ընդհանուր պետական ներկայացուցչական հիմնարկութիւն։ Պետութեան այդպիսի կազմը կոչւում է ֆեդերատիւ լատինական «ֆեդուս» խօսքից, որը նշանակում է միութիւն։ Ամեն մի ազգ, ամեն մի շրջան որը կմտնի ռուսական պետութեան կազմի մէջ պէտք է իրաւունք ունենայ կառավարելու միանգամայն ինքնորոյն, իր շրջանային սէյմով ուրիշ խօսքով ասած տեղական Պետական Դումայով։ Իւրաքանչիւր շրջանին պէտք տրւի ինքնորոշման լիակատար իրաւունք։ Դա նշանակում է իրաւունք ունենալ վարելու իր սեփական հասարակական և պետական գործերը այնպէս, ինչպէս ինքն է ուզում, առանց կենտրոնական կառավարութեան որևէ բռնութեան և սպառնալիքների, նաև իրաւունք պէտք է ունենայ օրէնքներ մշակելու, հաստատելու, հարկեր նշանակելու և այլն։

Ժողովրդական միլիցիա.

Ներկայումս զօրքը ժողովրդական հարստահարութեան մի գործիք է։ Նա ամբողջովին դանւում է ժողովրդական շահագործողների տրամադրութեան տակ, որոնք ուղարկում են զինւորներին աշխատաւոր ժողովրդի, գիւղացիների և բանւորների դէմ, պաշտպանելու կալւածատէրերին և գործարանատէրերին։ Բայց դա դեռ բոլորը չէ՝ մինչև անգամ այն պատերազմները, որոնք մղւում են զօրքի միջոցով ձեռնտու են միայն ժողովրդական շահագործողներին։ Այսպէս օրինակ. չինական պատերազմը ձեռնտու էր միայն վաճառականներին. իսկ ճապօնական պատերազմը ծագեց միայն նրա համար որ Կորեայում և Եալու գետի վրայ մեծ իշխանները և Թագաւորի խորհրդատուները (Բայաշև, Բեզօբրազով, և ադմիրալ Ալեկսէև) յափշտակել էին ահագին անտառներ։ Դա չպէտք է լինի այլ ես։ Զօրքը, զինւորները—միևնոյն աշխատաւոր ժողովուրդն է։ Իսկ ժողովրդին աւելի մօտ են իր սեփական, քան վաճառականական, շահերը։

Կնշանակէ զօրքը ամբողջովին պէտք է դանւի ժողովրդի ձեռքում։ Դրա համար հարկաւոր է, որ զօրքը բաժանւած չլինի ժողովրդից և որ ամբողջ ժողովուրդը, երբ անհրաժեշտ կլինի, դառնայ զօրք, իսկ զօրքը երբէք չդադարի ժողովուրդ լինելուց։ Հարկաւոր է որ զինւորները ծառայեն և սովորեն զինւորական գործը հէնց իրենց նահանգում մինչև անգամ գաւառում և ոչ թէ իր ծննդավայրից հարիւրաւոր և հազարաւոր վերստեր հեռու։ Այժմ կառավարութիւնը դիտմամբ ուղարկում է զինւորներին իրենց ծննդավայրից հեռու, որպէսզի երբ հարկաւոր և ձեռնտու լինի կառավարութեան, կալւածատէրերին և գործարանատէրերին, նրանք

առանց վախենալու և ամաչելու գնդակահարեն իրենց հարազատ ժողովրդին։ Ներկայումս այսպէս է լինում՝ Երևանցի զինւորները գնդակահար են անում օրինակ, Սարատովցիներին, իսկ Սարատովցի զինւորները՝ Երևանցիներին, Երևանցիները աւերում են Սարատովցիներին, իսկ Սարատովցիները Երևանցիներին։ Իսկ ժողովրդի թշնամիները նայում են և ուրախանում։ Մշտական զօրքը հարկաւոր է փոխարինել մշտական ժողովրդական միլիցիայով, որպէսզի բոլոր քաղաքացիները լինեն զինւորներ, իսկ զինւորները չդադարեն քաղաքացիներ լինելուց, որպէսզի բոլորը պարապեն զինավարժութեամբ և զէնքի կանչեն միայն ծայրահեղ դէպքում, այն էլ ժողովրդական ներկայացուցիչների կարգադրութեամբ։ Միայն այդ ժամանակ, զօրքը չի լինի իր հարազատ ժողովրդի հարստահարութեան գործիք։ Բայց ո՞րքան լաւ է ժողովրդական միլիցիան։ Արդեօք դա վտանգաւո՞ր չէ պետութեան համար։ Ի հարկէ չէ։ Դրան ապացոյց շատ երկրների օրինակը։ Ամերիկայում գոյութիւն չունի մշտական զօրք, կայ միայն ժողովրդական միլիցիա։ Իսպանիայում գոյութիւն ունի մշտական զօրք։ Մօտ ժամանակներումս պատերազմ ծագեց Ամերիկայի և Իսպանիայի մէջ, և ի՞նչ էք կարծում ո՞վ յաղթեց։ Ծովի վրայ էլ, ցամաքի վրայ էլ ամերիկական միլիցիան ջարդեց Իսպանական զօրքին։ Բօէրները—երկրորդ օրինակ։ Չնայելով որ Անգլիան այնքան ուժեղ է, այնուամենայնիւ նա ահագին ջանքերով միայն կարողացաւ յաղթել նրանց։ Որքան աւելի դժւար է պատերազմել ժողովրդի հետ քան թէ զինւորների հետ, որովհետև զինւորները կռւում են ուրիշի հրամանով, իսկ երբ ժողովուրդն է կռւում, նա գիտէ թէ ո՞ւր և ի՞նչի համար է գնում։

Բայց աշխատաւոր ժողովրդի երջանկութեան համար, բաւական չէ փոփոխութիւններ մտցնել միայն պետական գա-

նազան հասատատութիւններում։ Անհրաժեշտ է նոյնպէս ամենախիստ և ամենաարդարացի միջոցներ ձեռք առնել նաև որ ժողովրդին չկարողանան վնասել նաև զանազան պաշտօնեաները։ Դրա համար անհրաժեշտ է, որ նրանք բոլորն էլ նրանց թեւում և դատաւորները, լինեն ընտրուած ժողովրդից, և ժողովուրդն էլ իրաւունք ունենայ նրանց փոխելու, իսկ հարկաւոր դէպքում նաև ենթարկել դատաստանական պատասխանատուութեան առանց նախապէս իշխանութիւնից թոյլտուութիւն ստանալու։ Դատավարութիւնը պէտք է լինի բոլորի համար ձրի և այնպիսի հիմքերի վրայ դրուած, որ նա իսկապէս ծառայի արդարութեան և հշմարտութեան։ Դրա համար նա նախ և առաջ պէտք է անկախ լինի ոչ միայն կառավարութիւնից այլ և տեղական ազդարնակութիւնից։ Երկրորդ—անհրաժեշտ է նոյնպէս որ յանցաւորներին դատեն ոչ թէ միայն պետական դատաւորները, այլ որպէսզի նրանց կողքին նստած լինեն և ժողովրդի ներկայացուցիչները, ժողովրդի ընտրած երդւեալ ատենականները։ Դատարանը ամենայն ուշադրութեամբ պէտք է պաշտպանի բոլոր քաղաքացիների իրաւունքները։

Քաղաքացիական ազատութիւններ։

Բոլոր քաղաքացիներին, առանց բացառութեան, պէտք է տրուեն լիովին հետևալ իրաւունքները։

1. Խղճի ազատութիւն. Դա նշանակում է, իրաւունք տալ ամեն մէկին դաւանելու և քարոզելու այն կրօնը, որը ուզում է, առանց վախենալու, որ դրա համար նա կենթարկուի հալածանքների, ենշումների—իրաւունք ունենայ ազատ կերպով մի կրօնից անցնել միւսին և իր երեխաներին կրթել

այն ոգւով, ինչ ոգւով ուզում է, լսելով միայն իր սեփական խղճի ձայնին և ոչ թէ այս կամ այն իշխանութեան հրամանին։ Այդպիսի լուրջ գործում, մարդու միակ և առաջին դատաւորը—իր սեփական խիղճն է։

2. Խօսքի և մամուլի ազատութիւն. Դա նշանակում է իրաւունք տալ ամեն մէկին ասելու և տպելու այն ամենը, ինչ ուզում է, միայն այն պայմանով, որ ասածի և տպածի համար պատասխանատու է լինի երդւեալ դատաւորների առաջ։ Միայն այն ժամանակ, երբ կլինի խօսքի և մամուլի ազատութիւն, միայն այդ ժամանակ հնարաւոր կլինի մերկացնել ժողովրդի բոլոր շահագործողներին։ Միայն խօսքի և մամուլի ազատութեան դէպքում կարելի կլինի լսելի դարձնել ժողովրդի հասարակական կարծիքի ձայնը, որովհետև այդ դէպքում ամեն մէկը իրաւունք ունի ասելու գրելու և տպելու այն, ինչ ուզում է։

3. Ժողովների, միտինգների ազատութիւն։ Դա նշանակում է իրաւունք ունենալ ազատ կերպով հաւաքւել քննութեան առնելու զանազան հասարակական և պետական հարցեր։

4. Միութիւնների ազատութիւն։ Դա նշանակում է իրաւունք տալ բոլոր քաղաքացիներին միանգամայն ազատ կերպով միութիւններ կազմել իրենց շահերի պաշտպանութեան և փոխադարձ օգնութեան համար. նաև միացեալ ոյժերով պաշտպանելու իրենց իրաւունքները ինչպէս ժողովրդական շահագործողներից նոյնպէս և պետական իշխանութիւնից։

5. Գործադուլների ազատութիւն։ Դա անհրաժեշտ է աշխատաւոր ժողովրդին, որպէսզի նրանց միջոցով նա կարողանայ ձեռք բերել իր իրաւունքները և պաշտպանել իր շահերը ժողովրդական շահագործողներից, որոնք օգտւելով իրենց սեփականատիրական իրաւունքներից օրինական և ա-

նորէն ճանապարհներով ճնշում և հարստահարում են իրենց բանուորներին։

6. Անձի և բնակարանի անձեռնմխելիութիւն։ Դա նշանակում է, որ ոչ մի քաղաքացի չի կարող առանց դատարանի և քննութեան բանտարկուել, աքսորուել և ընդհանրապէս զրկուել իր որևէ քաղաքացիական իրաւունքից։ Ոչ մի իշխանութիւն իրաւունք չպէտք է ունենայ ներս խուժելու մասնաւոր բնակարան և խուզարկութիւն կատարել առանց դատաստանական իշխանութեան կարգադրութեան, եթէ միայն ի հարկէ դատարանը անկախ, անաչառ է։ Անցագրեր բոլորովին չպէտք է լինեն, որովհետև նրանք խանգարում են աշխատաւոր ժողովրդին տեղափոխուել մի տեղից միւսը։ Պէտք է միանգամայն վերացնել նաև ժանդարմական վարչութիւնը և գաղտնի ոստիկանութիւնը, ինչպէս և մատնիչներին, պրովոկատորներին, ուրիադնիկներին, ստրաժնիկներին, և դեմսկիյ նաչալնիկներին։ Ոչ մի զօրք չպէտք է ուղարկել ժողովրդի դէմ։ Ոչ մի իշխանութիւն իրաւունք չպէտք է ունենայ գաղտագողի կերպով կարդալու ուրիշի նամակները, ինչպէս այդ տեղի ունի այժմ Ռուսաստանում։ Բոլորովին պիտի վերացնել ուժեղացրած պահպանութիւնը և զինուորական դրութիւնը։ Միանգամայն ընդ միշտ պէտք է վերացնուի մահուան պատիժը։

Բոլոր քաղաքացիների հաւասարութիւնը և դասերի վերացումը։

Ընդհանրապէս ժողովրդին անհրաժեշտ է լիակատար և ընդհանուր քաղաքացիական հաւասարութիւն։ Դա նշանակում է, որ Ռուսաստանի բոլոր քաղաքացիները պէտք է

օգտուեն միևնոյն իրաւունքներով և բոլորը պէտք է հաւասար լինեն օրէնքի առաջ։ Աղքատներն էլ, հարուստներն էլ պէտք է ունենան միանգամայն միատեսակ իրաւունքներ։ Օրէնքով, ազնուականները ոչ մի առաւելութիւններ չպէտք է ունենան գիւղացիների հետ համեմատած։ Գիւղացիների իրաւունքները պէտք է հաւասարեցնուեն բոլոր քաղաքացիների իրաւունքների հետ։ Կնշանակէ պետութեան մէջ ոչ մի տեսակ դասեր չպէտք է լինեն։ Մինչև Ռուսաստանի ներկայ կարգերում մի դասի մարդիկ աւելի մեծ իրաւունքներ ունեն, քան միւս դասի մարդիկ։ Բոլորը պէտք է լինեն քաղաքացիներ, և ոչ թէ ազնուականներ, մեշչաններ, գիւղացիներ և այլն և այլն։

Եկեղեցու անջատումը պետութիւնից։

Եկեղեցին պէտք է բաժանուի պետութիւնից։ Դա նշանակում է, որ հոգևոր իշխանութիւնը երբէք և ոչ մի տեղ չպէտք է խառնուի աշխարհական, պետական և հասարակական գործերում, իսկ պետական իշխանութիւնը չպէտք է խառնուի հոգևոր գործերում։ Բոլոր դաւանանքի մարդիկ, առանց բացառութեան, պետութեան մէջ պէտք է միատեսակ իրաւունքներ ունենան։ Կառավարութիւնը չպէտք է հովանաւորի մէկ դաւանանքի մարդկանց և չպէտք է ճնշի միւս դաւանանքի մարդկանց, որովհետև դաւանանքը, կրօնը խղճի գործ է, իսկ խիղճը—ամեն մէկ մարդու սեփական գործն է, ինչպէս ասացինք վերևում։ Ոստիկանութիւնը չպէտք է օգնի քահանաներին պաշտպանելու և պահպանելու ուղղափառ կրօնը, որովհետև ոստիկանական բռունցքով ոչ մի կրօն չես կարող պաշտպանել, այլ աւելի շուտ կառատաւորես։ Քահանաները բեմից չպէտք է քարոզեն այն, ինչ հրա-

մայում է նրանց քարոզել կառավարությունը: Չէ՞ որ կառավարությունը երբեմն կարող է հրամայել այնպիսի բան քարոզել, որը ուղղակի կրօնին դէմ է: Հոգևոր իշխանությունը կառավարության հրամանների հետ ոչ մի գործ չպէտք է ունենայ: Կրօնը ամեն մարդու մասնաւոր գործը պէտք է լինի: Ամեն մարդու համար իր սեփական խղճի գործն է ինչ կրօն դաւանել, կամ որ եկեղեցուն պատկանել, հաւատացող լինել կամ բոլորովին ոչ հաւատացեալ և ոչ մի եկեղեցու էլ չպատկանել:

Ընդհանուր, պարտադիր և ձրի սկզբնական կրթություն և մայրենի լեզուն դպրոցներում:

Կառավարությունը ամեն կերպ պէտք է հոգայ ամբողջ ժողովրդի կրթության մասին և ամենից շատ աղքատ ժողովրդի կրթության. Ռուսաստանի բոլոր քաղաքացիների որդիքը անպայման պէտք է դրագէտ լինեն: Կնշանակէ պետության հաշուին պէտք է բաց անել այնքան դպրոցներ, որքան հարկաւոր է բոլոր երեխաների համար: Անհրաժեշտ է սկզբնական կրթությունը դարձնել պարտադիր: Դա հարկաւոր է նրա համար, որ որքան կարելի է շուտ ամբողջ ժողովուրդը դրագէտ դառնայ: Եթէ ժողովրդի մի մասին չքաւորությունը թոյլ չի տալի իրենց որդիներին դպրոց ուղարկել, կառավարությունը օգնության պէտք է դայ և իր գանձարանից նպաստ տայ նրանց երեխաների կրթության համար: Դպրոցներում երեխաների կրթությունը պէտք է դանուի աշխարհական ուսուցիչների և ոչ թէ հոգևորականության ձեռքում: Դա հարկաւոր է նրա համար, որպէսզի դպրոցների միջոցով հոգևորականությունը չխառնուի աշխարհիկ պետական գործերում և երեխաների վրայ չփաթաթի այս կամ այն դաւանանքը, կրօնը, որովհետև երեխաները դեռ ևս անկարող են հասկանալ այդ կրօնները, ինչպէս հարկն է: Երբ երեխաները կմեծանան, այն ժամանակ նրանք իրենք կընտրեն իրենց համար որևէ կրօն, որի համար և պատասխանատու կլինեն իրենց խղճի առաջ:

Բայց միայն տարրական դպրոցները բաւական չեն ժողովրդական կրթության համար: Անհրաժեշտ է հիմնել նաև միջնակարգ և բարձրագոյն դպրոցներ, ինչպէս են՝ գիմնազիաներ, համալսարաններ և այլն, որտեղ հնարաւորություն ունենային կրթություն ստանալ բոլոր ցանկացողները:

Կրթության ճանապարհը պէտք է բաց լինի հաւասարապէս բոլորի համար—թէ հարուստների և թէ աղքատների համար: Ուրիշ խօսքով ասած՝ կրթությունը բոլորի համար պէտք է հաւասար լինի: Հասկանալի է, որ նա պէտք է լինի միանդամայն ձրի: Դպրոցները պէտք է պահուեն կառավարության հաշուով: Բոլոր աղքատ աշակերտներին կառավարությունը պէտք է ցոյց տայ ամեն տեսակ աջակցություն: Դպրոցներում դասաւանդությունը պէտք է վարուի այն լեզուով, ինչ լեզուով խօսում է տեղական ժողովուրդը: Իսկ եթէ ազգաբնակությունը խառն է, այդ դէպքում բոլոր ազգաբնակությունների համար էլ պէտք է լինեն առանձին դպրոցներ: Անարդարություն է երեխաներին ուժով սովորեցնել ռուսաց լեզու՝ նրանց ծնողների կամքին հակառակ: Թող ռուսերէն սովորի նա, ով ուզում է:

ԳԼՈՒԽ Դ.

ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՕՐԷՆՍԴՐՈՒԹԻՒՆ։

Ութժամեայ բանուորական օր։

Բոլոր այդ փոփոխութիւնները մի նպատակի պէտք է ուղղուած լինեն —այն է պահպանել բանուոր մարդու հոգեւոր և ֆիզիքական ոյժերը և ապահովել լաւ աշխատավարձ՝ մարդկային ոյժի համեմատաբար մեծ խնայողութեամբ։ Իսկ դրա համար օրէնքը պէտք է աշխատաւոր ժողովրդի — թէ գիւղացիների և թէ բանուորների — պաշտպան հանդիսանայ։ Օրէնքով պէտք է արգելւի գործարաններում, դաւօդներում, արհեստանոցներում և այլն աշխատեցնել բանուորին 8 ժամից աւելի։ Միանգամայն պէտք է արգելւի сверхурочный աշխատանքը։ Մի քանի վնասակար արտադրութիւններում (օրինակ լուծկիների և այլն) բանուորական օրը աւելի պէտք է պակաս լինի։

Նորմալ աշխատավարձ։

Այժմ միայն գործարանատէրին է վերաբերում, թէ որքան պէտք է ստանայ բանուորը իր աշխատանքի համար, այսինքն որքան մեծ պէտք է լինի նրա աշխատավարձը։ Թէ գործարանատէրերը, թէ դաւօդչիկները, թէ միւս բոլոր ձեռնարկողները իրենք իրենց իշխանութեամբ և ինքնակամ որոշում են բանուորների աշխատավարձը։ Դա անարդարութիւն է։ Աշխատավարձը պէտք է որոշեն և նշանակեն ձեռնար-

կողները բանուորների հետ միասին, որոնք պէտք է դրա համար ուղարկեն իրենց առանձին ներկայացուցիչներին, օրինակ բանուորական միութիւնների ներկայացուցիչներին։ Բանուորական միութիւնները չեն կարող չզիտենալ թէ այս ինչ տեղում աշխատավարձը ինչ բարձրութեան վրայ է կանգնած։ Բանուորական ներկայացուցիչները, բոլոր, բանուորական միութեան մէջ կազմակերպուած, բանուորների անունից, սակարդութեան մէջ են մտնում ձեռնարկողների հետ։ Ձեռնարկողները ուզեն չուզեն, պէտք է ընդունեն բանուորական ներկայացուցիչներին, որոնց շնորհիւ նրանք այլևս չեն կարողանայ այնպէս հարստահարել բանուոր մարդուն, ինչպէս այժմ։ Բանուորների և ձեռնարկողների մէջ իրրև միջնորդ՝ կարող են լինել տեղական քաղաքային կամ զեմստվոյական հաստատութիւնների ներկայացուցիչները։ Ինչպէս արդէն ասացինք, այդ հաստատութիւնները պէտք է այնպէս վերակազմել, որ նրանց մէջ առաջին ձայնը պատկանի աշխատաւոր ժողովրդին և ոչ թէ ժողովրդական շահագործողներին։

Պետական ապահովագրութիւն։

Հիւանդութեան, ծերութեան և ընդհանրապէս երբ բանուորը անընդունակ է դառնում աշխատանքի, ժամանակաւորապէս թէ ընդմիշտ, նա պէտք է ապահովուած լինի։ Դրա համար պէտք է մտցնել բանուորների պետական ապահովագրութիւն։ Ինչպէս որ տները ապահովագրում են հրդեհից, ճիշտ այնպէս էլ ամեն մի բանուոր պէտք է ապահովագրուած լինի ամեն տեսակ դժբախտութիւններից և պատահականութիւններից և մինչև անգամ մահուան դէպքերից։ Կրակից ապահովագրութիւնը կազմակերպւում է այսպէս. ապահով-

գրված կալվածքի իւրաքանչիւր սեփականատէր ամեն տարի մտցնում է ապահովագրական վճառներ, որոնք և կազմում են առանձին ապահովագրական դրամագլուխ: Ամեն մի ապահովագրող վճառում է ընդամենը հազարից մի քանի ռուբլի, նայած թէ ինչքան է գնահատված կալվածքը: Եթէ հրդեհ պատահի, այն ժամանակ այրված կալվածքի տէրը ստանում է իր կալվածքի գինը ամբողջովին: Բոլոր ապահովագրած կալվածները հօ միաժամանակ չեն այրվում. մէկը այրվում է՝ հազարաւորները կանգուն են: Այդ պատճառով էլ հրդեհից առաջացած վնասները միշտ կարելի է լինում ծածկել ապահովագրական դրամագլխից: Կնշանակէ դուրս է գալի որ ապահովագրողների մի մասը ծածկում են միւսների վնասները: Նոյն կերպ կազմակերպվում են նաև հիւանդութեան, ծերութեան և դժբախտ պատահարների ապահովագրութիւնները: Պէտք է մտցնել նաև ամբողջ աշխատաւոր ժողովրդի ապահովագրութիւնը, որը առանձնապէս անհրաժեշտ է աշխատաւորների համար: Նրանք երբեմն մեռնում են, երեխաներին թողնելով առանց մի կտոր հացի: Գործարանական և այլ բանւորների համար առանձին կարևորութիւն ունի անաշխատութիւնից ապահովագրութիւնը: Այդ դէպքում, երբ բանւորը իրենից անկախ պատճառներով զրկված է աշխատանքից, նա ստանում է որոշ նպաստ: Աշխատաւոր ժողովրդի ամեն տեսակ ապահովագրութիւնները իրենց վրայ պէտք է վերցնեն խապէյինները և կաղնան, այսինքն պետական իշխանութիւնը: Նրանք պէտք է իրենց եկամտից մտցնեն ապահովագրական վճառներ ամեն մի բանւորի համար: Զէ՞ որ նրանց այդ բոլոր եկամուտները ստացվում են աշխատաւոր ժողովրդից: Պէտք է մտցնել պետական ապահովագրութիւն դժբախտ դէպքերից, անաշխատութիւնից, հիւանդութիւնից,

ծերութիւնից և այլն: Ապահովագրութեան գործը պէտք է վարեն և փողերը բաժանեն ոչ թէ չինովնիկները, այլ բանւորական ներկայացուցիչները:

Ընտրովի ինսպեկցիա և աշխատանքի պաշտպանութիւն:

Բայց միայն ապահովագրութիւնը դեռ բաւական չէ: Աշխատաւոր ժողովրդին, ժողովրդական շահագործողների ամեն տեսակ ճնշումներից և հարստահարութիւնից պաշտպանելու համար հարկաւոր են շատ ու շատ ուրիշ օրէնքներ: Այդ օրէնքները անհրաժեշտ են արտադրութեան բոլոր ճիւղերի, առևտրի և ընդհանրապէս ամեն տեսակ աշխատանքի համար: Օրինակ՝ այժմ գործարանները այնքան վատ են շինում, որ բանւորների համար վնասակար և վտանգաւոր է աշխատել նրանց մէջ: Այդ պատճառով հարկաւոր է այնպիսի մի օրէնք հրատարակել, որը արգելէր գործարանատէրերին այնպէս շինել գործարանները, որ նրանցում աշխատելը վնասակար լինէր: Այն բնակարաններն էլ, որոնք տրվում են բանւորներին խազէյնների կողմից, նոյնպէս պէտք է շինված լինեն առողջապահական պայմանների համաձայն: Բայց շատ անգամ լաւ օրէնքները բոլորովին չեն էլ իրականացնվում: Դրա համար պէտք է լինեն մարդիկ, որոնք հետևեն գործարանական օրէնքների իրականացման: Այդ մարդիկ ոչ թէ պէտք է լինեն չինովնիկներ, այլ բանւորների կողմից ընտրված ինսպեկտորներ:

Երեխաների և կանանց աշխատանքի կանոնաւորումն։

Որպէսզի երեխաները ընդմիշտ չկորցնեն իրենց առողջութիւնը և իր ժամանակին կարողանան սովորել դպրոցներում, հարկաւոր է որ միանգամայն արգելւի մինչև 16 տարեկան հասակը փոքր երեխաներին գործարաններում աշխատել։ Եթէ այդպիսի երեխաների ծնողները այնքան աղքատ են, որ կարիք ունեն իրենց երեխաների աշխատանքի—այդպիսիներին կաղնան պէտք է նպաստ տայ, ինչպէս արդէն վերը ասացինք։ Ընդհանրապէս անչափահասներին պէտք է զգուշութեամբ աշխատանքի դնել։ Նոյնպէս և կանանց։ Մի քանի վտանգաւոր արտադրութիւններում, միանգամայն պէտք է արգելւի երեխաների և կանանց աշխատանքը։ Ամեն շաբաթ իւրաքանչիւր մի բանւոր պէտք է ունենայ հանգստութեան ժամեր, իսկ յդի կանայք միանգամայն ազատւեն աշխատանքից, բայց անպայման առանց ռոճիկը կտրելու։

Ամեն մի գործարանի բանւորները պէտք է մասնակցութիւն ունենան գործարանական բոլոր գործերում։ Գործարանատիրոջ հետ միասին նրանք պէտք է մշակեն վարձի, գնահատութեան, ներքին կարգապահութեան և այլն կանոնները։ Մի խօսքով, բոլոր բանւորները պէտք է լինեն ոչ թէ խաղէշնի նորտերը, այլ հաւասար իրաւունքներով օգտւող մարդիկ։ Նրանք միշտ և ամեն տեղ պէտք է պաշտպանեն իրենց շահերը։ Աշխատաւոր ժողովուրդը պէտք է իրաւունք ունենայ պաշտպանելու իր շահերը։ Նա պէտք է լինի իր շահերի գործունեայ, անվախ և խիզախ պաշտպանը և ահա թէ ինչու։ - Աշխատաւոր ժողովուրդը կազմում է ազգաբնակութեան մեծամասնութիւնը։ Կնշանակէ նրա շահերը նոյնն են, ինչ որ ընդհանուր պետական շահերը։ Կնշանակէ աշխատաւոր ժողովրդի շահերի մասին հոգալ—դա նոյնն է թէ

ընդհանուր պետական շահերի մասին հոգալ։ Այն բոլոր փոփոխութիւնները, որոնք պէտք է մտցնել գործարաններում, դաւօղներում և ուրիշ արդիւնաբերական ինչպէս և առևտրական ձեռնարկութիւնների մէջ, պէտք է ուղղւած լինեն մէկ նպատակի, այն է, որքան կարելի է սանձահարել խաղէշնի և բոլոր շահագործողների իշխանութիւնը, և աստիճանաբար պատրաստել մի այնպիսի դրութիւն, երբ բոլոր գործարանները և դաւօղները կդառնան համաժողովրդական սեփականութիւն։

ԳԼՈՒԽ Ե.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ-ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՄՏՑՆԻԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ։

Հողային կարգերի մէջ մտցնելիք փոփոխութիւնները։

Միևնոյն նպատակի պէտք է ծառայեն այն բոլոր փոփոխութիւնները, որոնք անհրաժեշտ են ռանչպար-գիւղացիներին։ Ինչպէս արդէն ասել ենք, անմիջապէս պէտք է մտցնել հողի սոցիալիզացիան, ուրիշ խօսքով ասած, ամբողջ հողը պէտք է յայտարարւի հասարակական սեփականութիւն, և տրւի, նրանից շահւելու համար, այն բոլոր գիւղացիներին, որոնք ուզում են իրենց ձեռքերով մշակել։ Հողի սոցիալիզացիան առանձնապէս հեշտանում է նրանով, որ գիւղացիները իրենք են դրան ձգտում։ Իրենք գիւղացիները վաղուց արդէն հասկանում են, որ հողից պէտք է օգտւի միայն նա,

ով իր ձեռքերով է մշակում։ Սոցիալիստ-յեղափոխականների կուսակցութիւնը միայն ուզում է բաւարարութիւն տալ գիւղացիների այդ ցանկութեան և ձգտումներին։ Նա պահանջում է, որ բոլոր մասնաւոր սեփականատիրական հողերը խլւեն մասնաւոր ձեռքերից և վերածւեն հասարակական սեփականութեան և դնւեն տեղական համայնքների տրամադրութեան տակ։ Դա պէտք է տեղի ունենայ հաւասարիչ հողաշահութեան սկզբունքի հիման վրայ։ Ուրիշ խօսքով ասած, այնպէս պէտք է անել, որ երկրագործ գիւղացիները ստանան հողաշահութեան համար այնքան հող, որքան կարող են նրանք իրենց ընտանիքով մշակել, առանց վարձու բանւորների օգնութեան, ի հարկէ միևնոյն ժամանակ աչքի առաջ ունենալով հողի տեսակը և լաւութիւնը։ Սոցիալիստ-յեղափոխականների կուսակցութիւնը կարծում է, որ հողի սոցիալիզացիան կարելի է իրականացնել անմիջապէս, առանց յետաձգելու, չնայելով կառավարութեան և կալւածատէր-սեփականատէրերի ընդդիմադրութեան։

Պրոգրեսիւ եկամտային հարկ։

Ներկայումս կազմւում իւրաքանչիւր տարի ժողովրդից մօտ 2 միլիարդ բուբլի հարկ է հաւաքում։ Միլիարդ—նշանակում է հազար միլիոն։ Միլիոնը—հազար հազար։ Երկու միլիարդ—դա ոսկու մի ամբողջ դեղ է։ Ո՞վ է այդ փողերը տալիս։ Հասկանալի է, որ միևնոյն աշխատաւոր ժողովուրդը—գիւղացիները և բանւորները։ Հարկատուութեան մէջ մրցնելիք փոփոխութեան նպատակը պէտք է լինի նրա ամբողջ ծանրութիւնը աղքատներից դցել հարուստների վրայ։ Ով հարուստ է, թող նա աւելի հարկ վճարէ։ Ով շատ եկամուտ է ստանում, նրանից էլ շատ պէտք է ստացւի։ Կնշանակէ, հարկաւոր է նախ և առաջ, ներկայ գոյութիւն ունեցող հարկերի փոխարէն մացնել միայն մէկ եկամտային հարկ, այսինքն այնպիսի մի հարկ, որը հաւաքւում է ամեն մէկ մարդուց նրա եկամտի համաձայն։ Առանձնապէս մեծ հարկի պէտք է ենթարկել այն եկամուտները, որոնք ստացւում են առանց որևէ աշխատանքի, օրինակ ժառանգութիւնը։ Զէ՞ որ ժառանգութիւնը մէկից անցնում է միւսին առանց որևէ աշխատանքի, վերջինիս կողմից։ Եթէ անկարելի լինէր ահագին փողերը և կալւածները ժառանգել ուրիշներին, այն ժամանակ ամբողջ աշխարհում բոլորովին գոյութիւն չէին ունենայ անհամար հարստութիւն ունեցող մարդիկ։ Զէ՞ որ ոչ մի մարդ իր ամբողջ կեանքում չի կարող դիզել առանձնապէս մեծ կարողութիւն, այն էլ արդար աշխատանքով։ Մեծամեծ ժառանգութիւնները փչացնում են հէնց իրենց ժառանգներին՝ դարձնելով նրանց ծրիվերներ։ Հարկաւոր է միանգամայն վերացնել ժառանգելու իրաւունքը, որպէսզի բոլոր մարդիկ ապրեն միայն իրենց սեփական, և ոչ թէ ուրիշի աշխատանքով։ Թէև իրեն ժողովրդի կամքն է, ինչպիսի օրէնք նա կհրատարակէ ժառանգութեան վերաբերեալ։ Այնուամենայնիւ ժառանգութիւնը և նամանաւանդ խոշոր ժառանգութիւնը, հարկաւոր է չափաւորել։ Հարկաւոր է այնպէս անել, որ ժառանգութեամբ մէկ մասնաւոր ձեռքից անցնի միւս մասնաւոր ձեռքը միայն այնքան կարողութիւն, որը կարողանայ որդոց և մի քանի մօտ ազգականներին ազատել չքաւորութիւնից։ Միայն այդ նպատակով։ Դրանից դուրս աւելացածը պէտք է դնայ յօդուտ ամբողջ աշխատաւոր ժողովրդի։ Երբ այդպիսով կսանձահարւի ժառանգութեան իրաւունքը, այն ժամանակ բոլոր անչափ հարուստները կչքանան երկրիս երեսից, իսկ աշխատաւոր ժողովրդի

ձեռքը կանցնեն տհաղին հողեր և կապիտալներ։ Այդ ժառանգութիւններից ստացած եկամուտներով աշխատաւոր ժողովուրդը, շատ շուտով, իր ներկայացուցիչների միջոցով կձեռնարկի շատ ու շատ օգտակար ու անհրաժեշտ հասարակական ձեռնարկութիւնների։ Աշխատաւոր ժողովուրդը հրաշալի կերպով կարող է գործադրել ամեն մի հարստութիւն, միայն թէ այդ հարստութիւնները լինեն նրա ձեռքում և պետական իշխանութիւնը դանւի ժողովրդի առաջ պատասխանատու ներկայացուցիչների ձեռքում։ Կնշանակէ ժառանգութեան հարկը պէտք է մտցնել այժմ իսկ։

Բայց դրանով չի կարելի բաւականանալ։ Աշխատաւոր ժողովրդին անհրաժեշտ է նաև առհասարակ հարստութեան հարկ։ Դա ուրիշ խօսքով կոչւում է պրոգրէսիւ հարկ։ Սհա թէ ինչ է նշանակում պրոգրէսիւ հարկ. ենթադրենք թէ ես ստանում եմ հազար բուբլի եկամուտ, դու՝ երկու հազար բուբլի, իսկ երրորդը՝ երեք հազար բուբլի։ Ընդունենք թէ ես տալիս եմ տարեկան 20 բուբլի հարկ։ Դու ինձանից երկու անգամ աւելի հարուստ ես, բայց պէտք է վճարես ոչ թէ երկու անգամ աւելի պրոգրէսիւ հարկ, այսինքն 40 բուբլի, այլ օրինակ 60 *)։ Իսկ երրորդը պէտք է վճարի ոչ թէ երեք անգամ աւելի, այսինքն 60 բուբլի, այլ օրինակ 180։ Իսկ ով հազար բուբլուց պակաս եկամուտ ունի, նրանից ոչ մի կոպէկ հարկ չպէտք է վերցնել։

Կնշանակէ պրոգրեսիւ հարկ կոչւում է մի այնպիսի հարկ, որը վերցնւում է եկամտից և այն էլ միայն հարուստներից և մեծ եկամտներից։ Որքան աւելի հարուստ է մարդ, այնքան աւելի մեծ մաս պէտք է հանի իր եկամտներից հա-

*) Էլ՞ որ քեզ համար 60 բուբլի վճարելը նոյնքան հեշտ է, որքան ինձ համար 20-ը։

սարակական և պետական կարիքների համար։ Բայց կան մարդիկ, որոնց եկամուտը հազիւ հազ բաւականացնում է նրանց կարիքներին. այդպիսիները միանգամայն պէտք է ազատ լինեն հարկից։ Իսկ այժմ մեզ մօտ հէնց հակառակն է անում. ամենն տեսակ հարկեր վճառում են ժողովրդի հէնց աղքատ մասերը։ Պրոգրէսիւ հարկի շնորհիւ, նրա ամբողջ ծանրութիւնը, աղքատների փոխարէն, կընկնի հարուստների վրայ։ Ամեն տեսակ հարկերի փոխարէն պէտք է մտցնել միայն այդպիսի հարկ։

Անուղղակի հարկերի վերացումը։

Ժողովուրդը ամենից շատ տանջւում է անուղղակի հարկերից։ Աննուղղակի հարկ կոչւում է ապրանքների, օրինակ թէյի, շաքարի, օղու, լուծկու և այլ հարկ։ Կաղնան այդ հարկը դնում է գործարանատէրերի և դաւօդչիկների վրայ. վերջինները, մի բան էլ վրան աւելացնելով, դնում են վաճառականների վրայ, իսկ վաճառականները ստանում են գնողներից, այսինքն ժողովրդից։ Պարզ է որ այդ անուղղակի հարկերի շնորհիւ ապրանքների գինը աւելի թանգանում է։ Օրինակ սպիրտի վեդրօն արժէ մօտ մէկ բուբլի. մի վեդրօ սպիրտից դուրս է գալի երկու վեդրօ օղի. իսկ օղու վեդրօն ծախւում է մօտ 10 բուբլիով։ Կնշանակէ ամեն մի վեդրօ օղուց կաղնան 9 բուբլի մաքուր եկամուտ է ստանում։ Սհա թէ ինչքան փող է վճարում ժողովուրդը կաղնային օղու համար։ Պակաս հարկ չի վճարում ժողովուրդը և ուրիշ ապրանքների համար, ի հարկէ, որոնք հարկի են ենթարկւած։ Իսկ ինչո՞ւ է վճարում։ Միայն նրա համար, որ չի կարող առանց այդ ապրանքների ապրել։ Այդ հարկը վճարում են թէ աղ-

քատները և թէ հարուստները։ Հարուստն էլ աղքատն էլ միևնոյն չափով են վճարում։ Բայց չէ՞ որ աղքատի համար նրա աշխատած մի կոպէկը նոյնն է, թէ հարուստի մէկ ռուբլին։ Կնշանակէ անուղղակի հարկերը կազնայի, աշխատաւոր ժողովրդի դէմ դործ դնող, ամենամեծ անարդարութիւնն է։ Այդ պատճառով բոլոր անուղղակի հարկերը հարկաւոր է անմիջապէս վերացնել և փոխարինել եկամտային պրոդրէսիւ հարկով և ուրիշ աւելի արդարացի վճառներով։ Այն ժամանակ ամեն ինչ արժան կլինի՝ թէյն էլ, շաքարն էլ, նաւթն էլ, լուծկին էլ, ծխախոտն էլ։

Մաքսերի վերացումն։

Միևնոյն ժամանակ պէտք է վերացնել և արտասահմանից ներմուծող, աշխատաւոր ժողովրդի համար օդտաւէտ ապրանքներից վերցնող բարձր մաքսերը։ Այդ մաքսը կառավարութիւնը վերցնում է ներմուծող ապրանքներից սահմանի վրայ։ Զանազան ապրանքներից վերցնում է զանազան քանակութեամբ մաքս։ Մի քանի ապրանքներ այնքան թանդ են, որ միայն հարուստները, որոնք շռայլ կեանք են վարում, նրանք միայն կարող են առնել։ Պարզ բան է, որ միանդամայն արդարացի է մաքսի ենթարկել ամեն մի շռայլութեան առարկայ, որովհետև վերջ ի վերջոյ մաքսը պէտք է ստիպուած լինեն վճարել միայն հարուստները։ Բայց միանդամայն այլ բան է մաքսի ենթարկել այնպիսի ապրանքներ, որոնց դործածողն ու առնողը ամբողջ աշխատաւոր ժողովուրդն է։ Դրանք միայն վնաս են բերում աշխատաւոր ժողովրդին։ Եթէ այդ այդպէս է, հապա ինչու՞ է կազնան այդ անում։ Նախ և առաջ ռուսական դործարանատէրերին և զաւոդչիկներին

օդնելու համար։ Մաքսի շնորհիւ ներմուծող ապրանքների դինը բարձրանում է. ռուսական դործարանատէրերը և զաւոդչիկները նոյնպէս պատրաստում են այդ ապրանքներից։ Կնշանակէ մաքսի շնորհիւ նրանք էլ կարող են բարձրացնել իրենց ապրանքների դինը և այդպիսով օդտուել ժողովրդական կարիքից։ Կնշանակէ կառավարութիւնը մտցնելով այդպիսի մաքսեր, վնասում է աշխատաւոր ժողովրդին և հովանաւորում է ժողովրդական շահադործողներին։ Մաքսերի շնորհիւ Ռուսաստանում շատ թանդ արժեն երկաթեղէնը, մահուդեղէնը և ուրիշ դործուածքներ։ Կարելի է ասել, որ չկայ մի ապրանք, որի դինը ներկայ կառավարութեան անարդարացի միջոցների շնորհիւ, չբարձրանար։ Նա դիտմամբ է մտցնում մաքսեր, որպէսզի այդպիսով պաշտպանի ժողովրդական շահագործողներին։ Այդ պատճառով բոլոր այդ մաքսերը պէտք է անմիջապէս վերացնել։

Պէտք է վերացնել նաև այն բոլոր հարկերն ու տուրքերը, որոնցից տանջւում է աշխատաւոր ժողովուրդը։

Բոլոր հարկերն ու տուրքերը պէտք է մտցնեն միայն ժողովրդական ներկայացուցիչների համաձայնութեամբ։ Հասարակական, այսինքն ժողովրդից հաւաքած փողերը կարելի է ծախսել միայն ժողովրդական ներկայացուցիչների համաձայնութեամբ և հսկողութեամբ։ Հասարակական ամեն մի կոպէկի համար պէտք է հաշիւ տրի աշխատաւոր ժողովրդին, որովհետև այդ կոպէկները նրա զրպանից է դուրս եկել։

ԳԼՈՒԽ Զ.

ՏԵՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՄՏՑՆԻԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ։

Ինչպէս արդէն ասացինք, բոլոր տեղական գործերը պէտք է գտնուեն աշխատաւոր ժողովրդի ձեռքին։ Քաղաքային և զեմստուոյին տեղական ինքնավարութիւնները պէտք է լինեն միանդամայն անկախ և ոչ մի նահանգապետ չպէտք է խոչնդոտ հանդիսանայ։ Նահանգապետները պէտք է լինեն ընտրովի։ Նրանք պէտք է, ամբողջ ազգաբնակութեան նման, պատասխանատու լինեն և ենթարկուեն ընդհանուր դատարանին։ Թէ ժողովրդական առողջապահութիւնը, թէ ժողովրդական կրթութիւնը և թէ առհասարակ բոլոր տեղական գործերը պէտք է հոգան տեղական ժողովրդից ընտրուած մարդիկ։ Հարկաւոր է մտցնել ազրօնոմների ծրի օգնութիւն։ Անհրաժեշտ է կազմակերպել լայն գիւղատնտեսական մանր փոխառութիւն։ Բժշկական օգնութիւնը պէտք է բոլորի համար ծրի լինի։ Այնպիսի գործերը, ինչպէս են ջրի մատակարարութիւնը, լուսաւորութիւնը, ճանապարհների հաղորդակցութիւնը, ժողովրդական կրթութիւնը և այլն պէտք է գտնուեն ոչ թէ կաղեռնի, այլ հասարակական ձեռքերում։

Այն բոլոր ծեռնարկութիւնները, որոնք այժմ գտնուում են մասնաւոր ձեռքերում, պէտք է աստիճանաբար անցնեն քաղաքային և զեմստվոյին ընտրովի վարչութիւնների ձեռքը։ Որքան աւելի շատ ծեռնարկութիւններ այդպիսով անցնեն ժողովրդի ձեռքը, այնքան աւելի շուտ կիրականանայ սոցիալիզմը։ Քաղաքային և զեմստվոյին ինքնավարութիւնը պէտք է հոգայ նաև աղքատների բնակարանների մասին և կառուցանի նրանց համար ընդհանուր հասարակական բնակարաններ։ Քաղաքային և զեմստվոյին հաստատութիւնները պէտք է իրաւունք ունենան իւրացնել անշարժ կալքեր, եթէ իհարկէ, դա կպահանջի աշխատաւոր ժողովրդի շահերը։ Կառավարութիւնը ամեն. կերպ պէտք է աջակցի տեղական ներկայացուցչութեան զարգացման և նպաստի տնտեսական ու այլ տեղական հասարակական հաստատութիւններին, ինչպէս և տեղական միութիւններին և ընկերութիւններին, որոնց նպատակն է աշխատաւոր ժողովրդի բարօրութիւնը։

Ահա այն գլխաւոր փոփոխութիւնները, որոնք անհրաժեշտ են այժմ և իսկ մտցնել ռուսական պետական և հասարակական կեանքում և որոնց ծգտում է սոցիալիստ-յեղափոխականների կուսակցութիւնը։ Դրանցից դուրս կան շատ երկրորդական փոփոխութիւններ, որոնց մասին մենք չենք խօսում։ Բայի դորանից շատ ու շատ նոր փոփոխութիւններ կպահանջի ինքը կեանքը, որը անդադար առաջ է գնում և երբէք կանգ չի առնում։ Բայց ինչպիսի փոփոխութիւններ էլ որ չպահանջի, ամեն մի փոփոխութեան, ամեն մի բէֆորմի, ամեն մի օրէնքի, ամեն մի ծրագրի վրայ սոցիալիստ-յեղափոխականների կուսակցութիւնը կնայի մէկ տեսակէտից. սոցիալիստ-յեղափոխականների կուսակցութիւնը նախ և առաջ աչքի առաջ կունենայ, թէ այդ փոփոխութիւնները ինչ օգուտ կարող են բերել ամբողջ աշխատաւոր ժողովրդին, այսինքն գիւղացիներին և գործարանական ու այլ բանւորներին։ Սոցիալիստ-յեղափոխականների կուսակցութիւնը միշտ կողմնակից կլինի և կպաշտպանի միայն պետական ու հասարակական և տնտեսական կեանքի այն փոփոխութիւնները, որոնք ուղղուած են յօգուտ ամբողջ աշխատաւոր ժողովրդի։ Սոցիալիստ-յեղափոխականների գլխաւոր նպատակն է ժողո-

վրդական շահագործողների ձեռքից դուրս կորզել պետական, տնտեսական, փողային և առհասարակ ամեն մի իշխանութիւն և յանձնել աշխատաւոր ժողովրդի ձ'ռքը։

ԳԼՈՒԽ Է.

Ի՞ՆՉ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՊԷՏՔ Է ՁԳՏԵԼ ՊԵՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՐԴԱՐԱՑԻ ԿԱՐԳԵՐԻ։

Ի՞ՆՉ Է ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱ։

Հասկանալի է, որ պետական մեծ փոփոխութիւնները ինքն իրեն չեն կատարւում։ Մեծ գործերը մեծ ոյժեր են պահանջում։ Որոնք են այն ոյժերը, որոնք պէտք է վերաշինեն ամբողջ պետական կազմը յօգուտ ամբողջ աշխատաւոր ժողովրդի։ Կայ միայն մէկ մեծ, հսկայական ոյժ—ինքը աշխատաւոր ժողովուրդը։ Նրան ոչ ոք չի օգնի, եթէ ինքը իրեն չօգնի։ Բանն էլ հէնց նրանումն է, որ ինքը կարող է և պէտք է օգնի իրեն։ Ինքը կարիքն է ստիպում ժողովրդին սկսել այդ վերաշինութիւնը։ Կարիքը ստիպում է միևնոյն նպատակի ձգտել ոչ թէ մէկին, երկուսին, այլ հազարաւորներին, հարիւր հազարաւորներին և միլլիոնաւորներին։ Ոմանց մղում է դէպի այդ գործը քաղցը, չափազանց աշխատանքը։ Ծանր կեանքը, ոմանք էլ ձգտում են այդ միևնոյն նպատակին նրա համար, որ նրանց խիղճը չի կարողանում տեսնել և տանել ոչ մի անարդարութիւն։ Այդպիսիների թիւը քիչ չէ։ այդպիսի մարդիկ դուրս են գալի ոչ թէ միայն աշխատաւոր ժողովրդի միջից, այլ և ուրիշ հասարակական դասակարգերից, մինչև անգամ ժողովրդի հաշուով ապրողների միջից։ Ի հարկէ, բոլոր շահագործողները չեն այդպէս։ զարմանալին հէնց նա է, որ նրանցից մի քանիսները հրաժարւում են իրենց սեփական շահից և անցնում են ժողովրդի կողմը ու ամեն կերպ ձգտում՝ են ոչ թէ նրան, ինչ ձեռնտու է իրենց սեփական դասակարգին, այլ ինչ ձեռնտու է աշխատաւորների դասակարգին—գիւղացիներին և բանւորներին։ Նրանց խիղճը ստիպում է նրանց նոյն իսկ իրենց սեփական դասակարգի դէմ գնալ։

Այդպիսի մարդիկ հասկանում են որ իրենց սեփական դասակարգի շահերը մեծագոյն անարդարութիւն է։ Այդպիսի մարդկանց բոլորն էլ ճանաչում են։ Օրինակ, շատ ուսանողներ, որոնք հարուստ կալուածատէրերի, գործարանատէրերի, վաճառականների և չինովնիկների որդիք են, բայց և այնպէս նրանք հրաժարւում են հանգիստ ու ապահով կեանքից և գնում են բանւոր դասակարգի մօտ պարզելու, հասկացնելու նրան, թէ ինչու նրա կեանքը այնքան դառն է երկրիս վրայ։ Բոլորը գիտեն, թէ որքան ուսանողներ, ուսանողուհիներ, ուսուցիչներ և վարժուհիներ, բժիշկներ, ֆելդշերներ, փաստաբաններ և ուրիշ կրթուած մարդիկ, մանաւանդ վերջին տարիներում տրել են աշխատաւոր ժողովրդի գործին։ Յայտնի է նոյնպէս, որ կառավարութիւնը դրա համար նրանց բանտարկում, աքսորում էր Սիբիր, տաժանակիր աշխատանքի քշում։ Նրանք հարիւրներով մեռել են կախաղանների վրայ։

Կնշանակէ որքան մեծ էր նրանց սէրը դէպի արդարութիւնը և ճշմարտութիւնը, որ նրանք դրա համար չխնայեցին իրենց երիտասարդ կեանքը։ Այդպիսի մարդիկ բոլոր ժողովրդական շահագործողներին համարում են իրենց սեփական թշնամիներ, որովհետև նրանք աշխատաւոր ժողո-

վրդի թշնամիներ են։ Այդպիսի մարդկանց մասին ժողովրդական շահագործողները ժողովրդի մէջ սուտ լուրեր են տարածում, թէ դրանք խռովարարներ, ժողովրդի թշնամիներն են, և հարկաւոր է նրանց ջարդել։ Բայց մի՞թէ կարող են ժողովրդի թշնամի լինել այն մարդիկ, որոնք իրենց կեանքն են զոհում աշխատաւոր ժողովրդի շահերը պաշտպանելու համար և ծգտում են նոյն բանին, ինչին ձգտում է ինքը աշխատաւոր ժողովուրդը։ Էլ ո՞րտեղի թշնամիներ են, երբ իրենց կեանքն են զոհում արդարութեան համար։ Չէ՞ որ ժողովրդին հէնց արդարութիւնն է հարկաւոր, բայց, ի հարկէ, ոչ թէ կեղծ, դուռնաւորուած, կաղեօնի արդարութիւն։ Աշխատաւոր ժողովուրդը ոչ թէ ուզում է ուրիշներին վիրաւորել, այլ որ իրեն չվիրաւորեն։

Ահա այդպիսի մարդիկ, որոնք իրենց կրթութեան և զարգացման շնորհիւ, ընդունակ են լսել իրենց խղճի ձայնը և հրաժարուել իրենց սեփական և իրենց դասակարգային շահերից և կանգնել աշխատաւոր ժողովրդի շահերի կողմը, կոչւում են ինտելիգենտներ։ Դրանք հէնց նրանով են տարբերւում բոլոր շահագործողներից, որ մինչդեռ վերջինները երբէք չեն մոռանում իրենց շահը, օգուտը, ինտելիգենտները ընդունակ են մոռանալ։ Աշխատաւոր ժողովրդին անհրաժեշտ են ինտելիգենտները, որովհետև նրան անհրաժեշտ է կրթուած, անձնազոհ և անշահասէր մարդիկ, որոնք կուռեն ժողովրդական գործի համար։ Ի հարկէ, գիւղացիների և բանուորների մէջ էլ կան հասկացող մարդիկ, ժողովրդական ինտելիգենտներ, միայն թէ դեռ ևս նրանց թիւը շատ քիչ է, որովհետև մինչև այժմ նրանք իրենց կրթութիւնը ստացել են դպրոցներից, գիմնազիաներից և համալսարաններից դուրս։ Ժողովրդական ինտելիգենտները և միւս դասակարգերից դուրս եկած ինտելիգենտները բարեկամ դաշնակից են միմեանց.

միևնոյն ժամանակ նրանք երկուսն էլ աշխատաւոր ժողովրդի բարեկամներն են։ Պարզ է, որ թէ ինտելիգենտները և թէ աշխատաւոր ժողովուրդը պէտք է գործեն համերաշխ։ Ինտելիգենտները հանդիսանում են աշխատաւոր ժողովրդի ներկայացուցիչները նրա մղած կռուում։ Շատ ինտելիգենտներ— միևնոյն բանուորներն ու մինչև անգամ պրօլէտարներն են։ Չէ՞ որ շատ ուսանողներ, ֆելդշերներ, ուսուցիչներ, վարժուհիներ ոչ մի հարստութիւն չունեն։ Նրանք իրենց սեփական աշխատանքով են ապրում։ Կնշանակէ նրանց շահերը և վարձու բանուորների շահերը մէկ են։ Կնշանակէ ինքը կեանքն է սարքում նրանց աշխատաւոր ժողովրդի բարեկամ լինել։

Կռուի միջոցները. պրօպօգանդա։

Ի՞նչ միջոցներով կարող է աշխատաւոր ժողովուրդը հասնել իր նպատակին։ Գլխաւոր և միակ միջոցը —կռիւն է, նախ և առաջ կռիւ և դարձեալ կռիւ։ Առանց կռուի՝ ոչ մի տեղ ոչ մի բանի չեն հասել։ Ժողովրդական շահագործողները առանց կատաղի կռուի իրենց ձեռքից բաց չեն թողնի չաղ պատառը։ Այդ չաղ պատառը իրենց ձեռքում աւելի ևս ամուր պահելու համար, նրանք օգնութեան են կանչում նոյն աշխատաւոր ժողովրդի միջից բոլոր խաւար և անհասկացող մարդկանց։ Ոմանց խաբում և զրաւում են իրենց խորամանկ ճառերով, ոմանց կաշառում են, ոմանց վախեցնում են ապագայ կեանքի սանջանքներով։ Կնշանակէ առաջին գործը պէտք է լինի այնպէս անել, որ երևան գան որքան կարելի է շատ արդարութեան մարտիկներ։ Դրա համար հարկաւոր է ամբողջ աշխատաւոր ժողովրդի համար պարզել ներկայ պետական կարգերի ամբողջ անարդարութիւնը։ Ամեն մի գիւղացի,

ամեն մի բանւոր նախ և առաջ պէտք է ճանաչի և հասկանայ ճշմարտութիւնը։ Բոլոր հասկացող մարդիկ պէտք է բացատրեն բոլոր չհասկացողներին, թէ ի՞նչն է պատճառը, որ աշխատաւոր ժողովրդի կեանքը այնքան ծանր է, և ի՞նչ ճանապարհներով պէտք է կռւել ժողովրդական թշառութեան դէմ։ Ահա դա էլ հէնց կոչւում է պրոպոգանդա։

Այժմ ամբողջ աշխատաւոր ժողովրդին անհրաժեշտ է ամենալայն սոցիալիստական պրոպոգանդա, այսինքն հասկացնել թէ ի՞նչ է սոցիալիզմը և ինչպէս հասնել սոցիալիստական կարգերին։

Կազմակերպութիւն։

Բայց միայն պրոպոգանդան բաւական չէ։ Դրանից զուրս անհրաժեշտ է, որ բոլոր հասկացող մարդիկ միանան մէկ ընդհանուր ընկերական միութեան մէջ։ Այդպիսի միութիւն կազմել—նշանակում է կազմակերպւել։ Մարդկանց կազմակերպութիւնը—դա ամենամեծ ոյժն է։ Տասը մարդ եթէ բաժան բաժան են գործում հարիւր անդամ աւելի թոյլ են, քան այն ժամանակ, երբ այդ տասը մարդը գործում են միացած, կազմակերպւած։ Եթէ ժողովրդական շահագործողները, կալւածատէրերը, գործարանատէրերը, պալատականները ուժեղ են, դրա գլխաւոր պատճառն այն է, որ նրանք կազմակերպւած են։ Պէտք է կազմակերպւի և ամբողջ աշխատաւոր ժողովուրդը—թէ գիւղերում, թէ գործարաններում, թէ քաղաքներում, Պէտք է կազմակերպւել այսպէս. նախ և առաջ պէտք է կազմել միատեսակ մտածողների խմբակներ։ Այդ խմբակների անդամներից ամեն մէկը պէտք է աշխատի նորանոր մարդիկ միացնել նրանց ընդհանուր շահերով, ընդ-

հանուր նպատակով։ Այդպիսով փոքրիկ խմբակները կարող են մեծ միութիւններ դառնալ։ Այդպէս էլ անւում է այժմ։ Ռուսաստանում, ամենակարճ ժամանակամիջոցում, աշխատաւոր ժողովրդի մէջ առաջ եկան հազարաւոր զանազան միութիւններ։ Առանձնապէս աչքի է ընկնում Գիւղացիական Միութիւնը, որը 1905 թւի վերջում ունէր մօտ կէս միլլիոն անդամ։ Գոյութիւն ունեն և շատ բանւորական միութիւններ։ Բանւորական միութիւնները կազմւում են ըստ արհեստի։ Բայց դա էլ դեռ բաւական չէ։ Հարկաւոր է միանալ ոչ թէ միայն միութիւնների, այլ և կուսակցութիւնների մէջ։ Ամեն մի կուսակցութեան մէջ մտնում են զանազան արհեստների, զանազան մասնագիտութեան մարդիկ։ Ամեն մի կուսակցութիւն ունի իր ծրագիրը։ Ամեն մի կուսակցութեան ծրագրի մէջ ասւած է թէ ի՞նչ են պահանջում և ինչի՞ են ձգտում այդ կուսակցութեան մարդիկ և ի՞նչ միջոցներով։ Այն միջոցները, որով կուսակցութիւնը ձգտում է իր նպատակներին, կոչւում է այդ կուսակցութեան տակտիկա կամ կուսակցական տակտիկա։ Իւրաքանչիւր կուսակցութեան ծրագրի մէջ խօսւում է այն փոփոխութիւնների, ռէֆորմների մասին, որոնք անհրաժեշտ է մտցնել ներկայ պետական կարգերի մէջ։ Ռէֆորմա նշանակում է փոփոխութիւն։ Ռէֆորմները կարող են լինել քաղաքական։ Դա նշանակում է պետական իշխանութեան մէջ մտցնելիք փոփոխութիւններ։ Ռէֆորմները կարող են լինել և տնտեսական։ Դա նշանակում է տնտեսական կեանքի մէջ մտցնելիք փոփոխութիւններ։ Օրինակ հողը գիւղացիների ձեռքը տալը, զանազան հարկերի վերացումն, բանւորների ապահովագրութիւնը—դրանք բոլորը տնտեսական ռէֆորմներ են։ Ռէֆորմները կարող են լինել և սոցիալական։ Դա նշանակում է այն փոփոխութիւնները, որոնք պէտք է մտցնել ընդհանրապէս ամբողջ

հասարակական կարգերի մէջ։ Ամէն մի կուսակցական ծրագրում խօսւում է թէ ո՞ր ըէֆօրմները կարելի է մտցնել այժմ և իսկ և որ ըէֆօրմներին պէտք է կամաց կամաց ձգտել։

Պետական Դումայում իր մարդկանց անցկացնելը։

Միևնոյն ծրագիրն ընդունող բոլոր մարդիկ կազմակերպում են կուսակցութիւններ։ Բայց միայն կազմակերպելը բաւական չէ։ Ցանկալի փոփոխութիւններին հասնելու համար անհրաժեշտ է կռիւ մղել այն մարդկանց դէմ, որոնք հակառակ են այդ փոփոխութիւններին։ Հասկանալի է, որ ամենից շատ պէտք է հակառակ լինեն այդ փոփոխութիւններին ժողովրդական շահագործողները։ Այն երկրներում, որտեղ պետական իշխանութիւնը գտնւում է ժողովրդի ձեռքում, կռիւ ամենալաւ միջոցը կայանում է հետևեալում. աշխատում են որքան կարելի է շատ թւով Պետական Դումայի անդամ անցկացնել իրենց մարդկանցից։ Այնտեղ պէտք է աշխատեն նրանք ընդունել տալ այն բոլոր ըէֆօրմները, որոնք գրւած են նրանց կուսակցութեան ծրագրում։

Գործադուլ, բոյկոտ և ուրիշ միջոցներ։

Սակայն կռիւ միայն այդ միջոցը դեռ բաւական չէ. աշխատաւոր ժողովուրդը պէտք է ցոյց տայ իր ոյժը և հասնի իր առաջադրած նպատակներին գործադուլների միջոցով, այսինքն միաժամանակ հրաժարւելով աշխատանքից։ 1905 թ. հոկտեմբերին ռուսական աշխատաւոր ժողովրդի կամքը արտայայտւեց ընդհանուր գործադուլում, որը մի-

անդամից ընդգրկեց մի քանի միլլիոն զանազան դասակարգերի և զբաղմունքների մարդկանց։ Այդպիսի հսկայական գործադուլ դեռ տեսնւած չէր ոչ մի երկրում։

Կայ կռւի և մի ուրիշ միջոց, որը կոչւում է բոյկոտ։ Բոյկոտ, դա, պարզ ասած, խաղաղ, բայց միահամուռ հասարակական կռիւ է ժողովրդական շահագործողների դէմ։ Այսպէս օրինակ գիւղացիները բոյկոտ են յայտարարում կալւածատէրերին՝ ոչ ոք չի գնում նրանց մօտ աշխատելու, նրանց հողերը ոչ ոք չի վերցնում կապալով, ոչ մի գործ չեն ուզում նրանց հետ ունենալ. իսկ կալւածատէրերը առանց գիւղացիական ձեռքերի նոյնն են, թէ առանց սեփական ձեռքերի։ Ճիշտ այդպէս այժմ բոյկոտ են յայտարարում այն զինւորներին ու սպաներին, որոնք կրակում են բանւոր ժողովրդի վրայ՝—նրանց ոչ ոք իւր տունը չի ընդունում, ոչինչ չեն ծախում նրանց, ծանօթները ձեռք չեն տալի և այլն։ Մի խօսքով բոյկոտը կարելի է հազար ու մի ճանապարհով իրագործել։

Բայց կարող է և պատահել, որ կառավարութեան գլուխ կանգնած ժողովրդական շահագործողները անտարբերութեամբ վերաբերւեն այդ համաժողովրդական պահանջներին էլ, մի բան որ ոսոխականութիւնը և զինւորական ոյժը նրանց ձեռքումն է։ Այն ժամանակ ի՞նչ է մնում անել բանւոր ժողովրդին։ Նա կամ քաղցից պէտք է մեռնի կամ պետական իշխանութեան, այսինքն ժողովրդական շահագործողների կազմակերպւած ոյժի դէմ պէտք է հանի իր սեփական ոյժը, իր մարտիկներին, իր պաշտպաններին, որոնք պատրաստ են ժողովրդին օգնելու համար իրենց կեանքը զոհել։ Օրինակ 1906 թ. այսպիսի մի դէպք պատահեց։ Տամբովսկի նահանգում, մերկ ու քաղցած գիւղացիները սկսեցին կալւածատէրերից խլել հողը և ցորենը։ Ի հարկէ, ինչպէս առհասարակ ընդունւած է, կալւածատէրերը իսկոյն վազեցին նահանգապ'ետի մօտ և

օգնութիւն խնդրեցին։ Նահանգապետը, ինքն էլ մի կալուածատէր, իսկոյն գիւղացիների դէմ քաշեց ոստիկանութիւնը, զօրքը և ժանդարմերիան։ Այդ բոլոր ոյժի դիմաւոր նշանակեց մի վերին աստիճանի անխիղճ, գող և աւազակ մէկին, Լուժենովսկի ազգանունով։ Հոսեցին արտասուքի և արեան գետերը։ Կօղակները, դինուորները, ոստիկանութիւնը սկսեցին ծեծել և տանջել գիւղացիներին, թալանել նրաց ունեցած չունեցածը (չէ որ գիւղացու սեփականութիւնը կառավարութեան համար «սրբազան» չէ), բռնաբարել կանանց և աղջկերանց։ Ի՞նչ պէտք է անեն գիւղացիները։

Ահա այդ ժամանակ գիւղացիներին օգնութեան հասաւ սոցիալիստ-յեղափոխականների կուսակցութիւնը։ Այդ կուսակցութեան անդամներից մէկը—մի երիտասարդ գերեցիկ օրիորդ Մ. Սպիրիդօնովան համաժողովրդական դատարանին քաշեց նրան և սպանեց։ «Սիրտս պատռւում էր կսկծից, ասաց նա դատաւորներին, այնքան ամօթ էր ինձ համար ապրել... Իսկ երբ ես տեսայ տանջանքներից և ծեծից խելագարուած գիւղացուն, տեսայ կօղակներից բռնաբարուելուց յետոյ ինքնասպանութիւն գործած աղջկայ մօրը, ես ասացի՝ կսպանեմ Լուժենովսկուն և կախաղան կբարձրանամ»... Այդպիսի դատաստանի են ենթարկուել և մի շարք ժողովրդական գահիճներ—ինչպէս են՝ ներքին գործերի մինիստր Սիպեագին, Պլևէ, մեծ իշխան Սերգէյ, Բաքուի նահանգապետ Նակաշիձէ, Իգդիրի նաչալնիկ Բօգուսլաւսկի, սահմանագլխի զօրքի սպայ Բրկով և այլն։ Կռուի այդ միջոցը կոչւում է տերրոր։ Հայերէն դա նշանակում է սարսափ, վախ։ Տերրորի ենթարկել, նշանակում է սարսափ դցել։ Ի հարկէ, այդ միջոցը այնքան էլ գուրալի և զեղեցիկ միջոց չէ, և սոցիալիստ-յեղափոխականները դիտակցում են այդ։ Տերրորի են դիմում միայն այն ժամանակ և այն երկրներում, որտեղ կառավարութիւնը ինքն է

սարսափեցնում ժողովրդին իր ոճրագործութիւններով։ Ժողովուրդը կամայ ակամայ կառավարչական տերրորին պատասխանում է իր սեփական տերրորով։ Հասկանալի է, որ այդ միջոցին դիմում են այն ժամանակ միայն, երբ ուրիշ ելք չի լինում։ Ոչ մի տերրոր չի կարող տեղի ունենալ այն երկրներում, որտեղ ժողովրդի պահանջները և ցանկութիւնները բաւարարութիւն են ստանում խաղաղ և օրինական ճանապարհով։

Բայց տերրորը կռուի վերջին միջոցը չէ։ Տերրորը միայն այդ կռուի սկիզբը, նախադուռն է։ Նրա յետևից գալիս է ժողովրդական ապստամբութիւնը։ Ցուսահատութեան հասցրած ժողովուրդը վերջ ի վերջոյ ոտքի է կանգնում իր ճնշողների դէմ։ Նա չի կարող զէնքը ձեռքին չապստամբել իր շահագործողների դէմ։ Պարզ է, որ դա արիւնոտ և ոչ ցանկալի միջոց է։ Բայց ինչ արած։ Շատ և շատ դէպքեր են եղել, երբ ժողովուրդը միահամուռ կերպով ոտքի է կանգնել, իր պահանջները առաջադրել, քաղաքական և հասարակական արմատական փոփոխութիւնների ձգտել, դատարանի ենթարկել և կախաղանի դատապարտել իր թագաւորներին։ Այդպիսի ժողովրդական ապստամբութիւնը կոչւում է յեղափոխութիւն։ Համարեա բոլոր ժողովուրդները իրենց իրաւունքները ձեռք են բերել յեղափոխութեան միջոցով։ Այդպէս է եղել Գերմանիայում, Աւստրիայում, Ֆրանսիայում, Իտալիայում և Ամերիկայի համարեա բոլոր պետութիւններում։

Ներկայումս հերթը հասել է Ռուսաստանին։ Ամբողջ աշխատաւոր ժողովուրդը—թէ գիւղացիները և թէ բանւորները—պահանջում են հասարակական և քաղաքական արմատական և անյետաձգելի փոփոխութիւններ։ Կառավարութիւնը չի ուզում զիջել։ Ի՞նչ պէտք է անի աշխատաւոր ժողովուրդը։ Նա կամ պէտք է լռի, կամ կառավարութեան

ղէկը իր ձեռքն առնի։ Իսկ մի թէ կարելի է այլ ևս յառաջ թեամբ տանել այն բոլորը, ինչ որ մինչև այժմ արել է։ դա անհնարին է։ Կնշանակէ մնում է միայն որ ժողովուրդը իր ձեռքն առնի կառավարութեան ղէկը։ Իսկ դրան ի՞նչպէս հասնել։ Միայն մէկ ճանապարհ կայ—ծգտել սահմանադիր ժողովի հրաւիրելուն, ընտրել ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի քուէարկութեամբ իր հաւատարիմ մարդկանց, որոնք և պէտք է վերաշինեն ամբողջ պետական և հասարակական կազմը։ Ժողովրդի կամքը պէտք է ամենից, մինչև անգամ թագաւորի կամքից էլ, բարձր լինի։ Սահմանադիր ժողովը—ժողովրդական կամքի ձայնն է։ Միայն այդպիսի սահմանադիր ժողովը կարող է և պէտք է մշակի պետութեան հիմնական օրէնքները, որոնց և պէտք է հպատակուեն բոլորը։ Ոչ մի Պետական Դումա չի կարող իր վրայ վերցնել այդ գործը։

Սահմանադիր ժողովը—դա ներկայ կարգերի վերաշինութեան առաջին և անյետաձգելի քայլն է, ազատ ժողովրդական կառավարութիւն հաստատելու և աշխատաւոր ժողովրդի շահերը պաշտպանելու միակ ուղիղ ճանապարհն է։

Միայն յանուն ապագայ արդարութեան և ճշմարտութեան, յանուն սոցիալիզմի թագաւորութեան մղած կուռում է ձեռք բերում աշխատաւոր ժողովուրդը իր իրաւունքը։

Спец. Отдел.

ՀՀ Ազգային գրադարան
NL0337619
ՀՀ Ազգային գրադարան
NL0337618
ՀՀ Ազգային գրադարան
NL0337617
ՀՀ Ազգային գրադարան
NL0337621
ՀՀ Ազգային գրադարան
NL0337616
ՀՀ Ազգային գրադարան
NL0337620
ՀՀ Ազգային գրադարան
NL0337615

29768-/24
29779-C